

ՈՉ ՈՔԻ ՊԻՏԻ ԹՈՅԼԱՏՐՈՒԻ ԵՐԿԻՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՆԱԽԿԻՆ ՎԻՃԱԿԻՆ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՏ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երկ կր այցելուներուն հաւաստեց, որ պետութիւնը ոչ ոքի պիտի թողարկէ երկիրը վերադարձնել անցեալի վիճակին, իսկ վերջին երեք տարիներուն պապալին նուաճումները բնական արդիւնքն էին լիբանանցիներուն միջեւ պարակցութեան եւ միակամութեան, որոնց միջոցով կարելի եղաւ յաղթահարել բազմաթիւ դժուարութիւններ եւ անոնք բաւարար են յաղթահարելու նոր դժուարութիւններ:

«Պետութիւնը վճռած է դիմել շարք մը միջոցառումներու, դարմանելու համար տնտեսական եւ ընկերային տագնապները եւ այդ լուծումները պիտի տրուին գործակցաբար առջնչութիւն ունեցող բոլոր կողմերուն հետ, ինչպէս նաեւ պետական ու սեփական մարմիններուն միջեւ համակարգումով, որովհետեւ լուծումը կ'ենթադրէ հաւաքական ճիգ, որպէսզի երկիրը կարենայ դիմագրաւել մարտահրաւերները», ըսաւ ան:

Նախագահ Լախուտ նաեւ դրուատեց արտերկրի լիբանանցիներուն կարեւոր դերակատարութիւնն ու ճիգերը, զորս ի գործ կը դնեն օժանդակելու մայր հայրենիքին: «Լիբանանի ուժին պղծակներէն մէկն է արտերկրի լիբանանցիներուն ուժն ու միակամութիւնը», ըսաւ ան:

Նախագահ Լախուտ կոչ ուղղեց բոլոր լիբանանցիներուն՝ օգտուելու անցեալի դասերէն եւ չկրկնելու անցեալին Լիբանանը տկարացու-

ցած սխալները: Լիբանան վերագտած է իր ուժը, կայունութիւնը, անխոցելիութիւնն ու շրջանային եւ միջազգային բեմերուն վրայ իր ներկայութիւնը. ասիկա մեծ իրագործում մըն է եւ պէտք չէ անկէ հրաժարիլ կամ թոյլ տալ, որ ուրիշ մէկը երկիրը վերադարձնէ նախկին վիճակին, ըսաւ ան:

Նախագահ Լախուտ երկ ընդունեց առեւտուրի, ճարտարարուեստի եւ երկրագործութեան գրասենեակներու համախմբումի նախագահ Ասնան Քասսարը, որ յայտնեց, թէ նախագահ Լախուտէն ցուցումներ ստացած է տնտեսական մարմիններուն պատրաստած տագնապի յաղթահարման առաջարկները, վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ այլ կողմերու հետ քննարկումին սկսելէ առաջ:

Քասսար նաեւ ըսաւ, որ նախագահ Լախուտի փոխանցած է տնտեսական մարմիններուն գոհունակութիւնը տիրող քաղաքական մթնոլորտին եւ արտակարգ ու անակնկալ հարցերու լուծման նախագահ Լախուտի որդեգրած ոճին համար:

«Դրան լուացող երկիրներու անուանացանկէն Լիբանանի անունի ջնջումը կարեւոր քայլ մըն է լիբանանեան տնտեսութեան ու դրամատնային մարմին նկատմամբ միջազգային վստահութիւնը վերականգնելու ուղղութեամբ», ըսաւ ան:

Քասսար յայտնեց, որ նախագահ Լախուտի հետ նաեւ քննարկած է տնտեսութեան եւ խոստումայից քրօսաշրջութեան եղանակին կապում հարցերը:

Երեսփոխան Ալթուն Հատտատ նախագահ

Շարք՝ էջ 3

«ԱՇԿԱԿ»Ի ՀԵՌԱՍՏԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱՎՅՈՒԹԻՒՆԸ Հ. Յ. Գ. ՄՈՍԿՈՒՍՅԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԻՆ ՀԵՏ

ՊԵՏՔ ՉԷ ԱՌԻԹ ՏԱԼ, ՈՐ ԾԱՅՐԱՅԵՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ՀԱՐՈՒԱԾԵՆ ՀԱՅ-ՌՈՒՍ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ'ԸՍԵ ՍԵՅՐԱՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Կիրակի, 7 Յուլիսի գիշերը Ռուսիոյ Կրասնոարմէյսք քաղաքին մէջ հայ բնակիչները ենթարկուած էին վայրագ յարձակումներու: Քաղաքի ռուս բնակիչներէն մօտ 45 երիտասարդներ խուճած էին հայերու բնակարաններ, ծեծի ենթարկած անոնց բնակիչները, եւ գործած մեծ աւեր: 15 հայեր փոխադրուած էին հիւանդանոց:

Մանրամասնութիւններ ստանալու համար վերոնշեալ դէպքին ու անոր տուն տուող պատճառներուն մասին, «Ալկոս» երկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Հ. Յ. Գ. Մոսկուայի գրասենեակի պատասխանատու Սէյրան Պաղտասարեանի հետ:

Դէպքին յաջորդող օրերուն տարբեր բացատրութիւններ տրուած էին անոր պատճառներուն մասին: Յատկապէս հաղորդուած էր, որ յարձակումները շարունակութիւնն էին սրճարանի մը մէջ հայու մը եւ ռուսի մը միջեւ պատահած միջադէպի մը: Այս գծով Սէյրան Պաղտասարեան պարզաբանեց, որ սրճարանին մէջ պատահած միջադէպը պարզապէս պատրուակ մըն է եւ հիմնական ազդակը չէ հայերու դէմ կատարուած յարձակումներուն: Ան յայտնեց, որ վերջին տարիներուն Ռուսիոյ մէջ, յատկապէս անգրագէտ երիտասարդութեան մօտ կ'աճի հակակոմկապեան տրամադրութիւն մը, որ մերժողական եւ անհանդուրժող մօտեցում ունի Ռուսիոյ բոլոր ոչ ռուս տարրերուն հանդէպ: Ժողովուրդին նշեալ շերտը ունի այն սխալ ըմբռնումը, թէ ոչ ռուս տարրերը՝ հայեր, պե-

րինք, վրացիներ առեւտուրի, շինարարութեան եւ այլ մարմիններու մէջ յաջողութիւն արձանագրելով՝ պատճառ կը դառնան իրենց տնտեսական-ընկերային անբարենպաստ իրավիճակին:

Պաղտասարեան ըսաւ, որ այս մտայնութիւնը նաեւ կը շահագործուի քաղաքական որոշ շրջանակներու կողմէ, որոնք շուրջիստական տրամադրութիւններէ մեկնելով միշտ կը փորձեն հալածանքի ենթարկել ոչ ռուս քաղաքացիները: Այս իմաստով, Կրասնոարմէյսքի վայրագութիւնները կապակերպուած էին, որովհետեւ յանցագործները հայերու բնակարանները կը խուճէին հասցիներու հիման վրայ եւ ոչ թէ պատահաբար: Ան աւելցուց, որ այս իրավիճակը յատկապէս շեշտուած է վերջին երկու տարիներուն ընթացքին, եւ Ռուսիոյ տարբեր շրջաններուն մէջ, տարբեր ազգերու պատկանող իմբաւորումներ ենթակալ են այս երեւոյթին:

Նման դէպքեր կ'անխարհիկելու եւ յատկապէս Կրասնոարմէյսքի դէպքին յանցագործները յայտնաբերելու նպատակով տեղւոյն հայկական շրջանակներուն դիմած քայլերուն մասին մեր հարցումին պատասխանելով՝ Սէյրան Պաղտասարեան ըսաւ, որ արդէն Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանութիւնը իրապարակած է հաղորդագրութիւն մը, եւ ռուսահայ համայնքի ներկայացուցիչներ այցելած են Կրասնոարմէյսք եւ ծանօթացած իրողութեան: Հանդիպումներ տե-

Շարք՝ էջ 10

ԻՐԱՆԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԿԱՅԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՌԱՇԽԵՆԿԹԸՆ – ՄՈՍԿՈՒՍ ԲԱՆԱՎԷՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Ռազմավարական եւ Միջազգային Ուսումնասիրութիւններու կեդրոնի երկու մասնագէտներ երկ ամերիկեան իշխանութիւններուն ներկայացուցին սեւագիր ծրագիրը, որ կ'առաջարկէ լուծումը Ռաշխեկթըն – Մոսկուա բանավէճին՝ Իրանի Մոսկուայի կողմէ կորիպային արհեստագիտութեան օժանդակութիւն յատկացնելու հարցով:

Մասնագէտները անհրաժեշտ համարեցին, որ Ռաշխեկթըն նոր մօտեցում մը ունենայ այս հարցին: Անոնք նաեւ ընդգծեցին, որ Իրան պէտք է կնքէ Կորիպային Միջազգային Գործակալութեան փրոթոգոլը, որ կանոնաւոր քննութիւններու արտօնութիւն պիտի տայ Իրանի Պուշէի կայանին մէջ:

ԹՈՒՐԵՒԱ ՄԵՐՈՒՄԸ ԲԱՆԱՎԷՃԸ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Ի. ՃԷՄ ՀՐԱԺԱՐԵՑԱԻ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ եւ տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշ երկ հրաժարեցան՝ կրկնակի հարուած հասցնելով երկրին հիւանդ վարչապետին, որ երկ գրաւոր յայտարարութեան մը մէջ կոչ ուղղած է իր կուսակցութեան աւելի քան 35 անդամներու, որոնց կարգին՝ 7 նախարարներ, որ վերադառնան: Աւելի ուշ Տերվիշ յետ կոչեց իր հրաժարականը՝ ընդառաջելով հեծելիքի եւ նախագահ Ահմէթ Նեճտէթ Սեզէրի փափաքին:

Անցնող շաբթուան ընթացքին Պիւլէնթի հեծելիքի կառավարական ընկերակցութեան հրաժարումները հաւանաբար բեմը կը պատրաստեն կանխահաս ընտրութիւններու, որոնք, կարգ մը մտավախութիւններու համաձայն, կրնան վնասել Թուրքիոյ տագնապահար տնտեսութեան:

Տերվիշ առաջօտեան տեսակցութիւն մը ունեցած է Դրամական Մի-



Ճէմ իր խօսքին պահուց խորհրդարանին մէջ, մինչ՝ Եճեթ կ'ունկնդրէ

Զագային Ֆոնտին կի մը հետ, որ երկրին 16 Թուրքիա այցելող խմբա-

Շարք՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՉԱՆԴԱՄԱԿՑԻ ՕԹԱՆԻՆ

Կ'ԸՍԵ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց, որ Հայաստան պիտի չանդամակցի ՕԹԱՆԻ: «ՕԹԱՆԻ Հայաստանի անդամակցութեան հարցը դրուած չէ արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ», ըսաւ նախարարը:

Շարք՝ էջ 10

ԱՆԿԱՆ ԹՈՒՐԵՒՈՅ ԲԱՆԱՎԷՃԸ ՏԱԳՆԱՊԵՆ

ԵՐԿԵՕՍՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Կ'ԸՍԵ ՉԻՒՆԻԿ ԱՂԱՋԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Զիւնիկ Աղաջանեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին, անդրադառնալով Թուրքիոյ մէջ ստեղծուած քաղաքական իրավիճակին, յայտնած է, թէ Հայաստան կարեւոր կը գտնէ Թուրքիոյ մէջ

Շարք՝ էջ 10

ՃԱՇԱՐԱՆ ՌԻՍԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(Ժողով էլ Պաղոթ, Պապիւն դեպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԳ, ՀԱՆՊԱՐՏ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՈՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադամ ձաշեր, սակ մեկ անձի 8\$: Խմիչքը՝ ըստ ապսպրանքի:
- Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
- Ամեն շաբաթ երեկոները յատուկ յայտագիր հանրածափ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուի:
- Փոքրերու յատուկ խաղալայր:
- Կը ստանձնենք միութեանական եւ անձնական խրախմանքներ յարմար գիներով:

ԾԱՆՕԹ. Յատուկ ձաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օդի, գարնջուր եւ զովացուցիչ:

Սեկ անձի համար միայն 17\$:

Հեռաձայն. 04 - 808707 եւ 03 - 360667:

ՌԻՍԱՄ ՊԸՆ ԼԱՏԵՆ ԵՒ ՄՈՒԼԼԱ ՕՍԱՐ ՈՂՋ ԵՆ

Մարդ մը, որ ինքզինքն ցերեպայացուցած է իբրեւ «Քայլոտ» ցանցին մէկ բանբերը, Չորեքշաբթի օր արաբական էմ. Պի. Սի. պատկերասփիռի կայանին յայտնած է, որ Ռուսամ Պըն Լատեն եւ քաղաքացիական ղեկավար մոլլա Օմար ողջ եւ առողջ են, առանց բնականաբար յայտնելու, թէ ո՞ր կը գտնուին անոնք:

Մարդը, որուն կեղծ անունը Ապու Լայա Լիպի է, հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին յայտնած է, որ Պըն Լատեն եւ անոր բարձրաստիճան փոխանորդները լաւ են եւ թէ «մենք, սրբազան պատերազմ տանողները, կը յուսանք յառաջիկայ հանգրուանը թեւակոխել»:

Ան ըսած է, թէ կը փորձեն ռազմաճակատները ընդարձակել. «Ամիկա սպանութիւններու պատերազմ մը, գործարարութիւններու դէմ պատերազմ մը պիտի ըլլայ եւ պիտի հարուածէ բշտամին այն վայրին մէջ, ուր չի սպասուիր»:

Ռաշխեկթընի մէջ, ամերիկացի պաշտօնատարներ Լիպին ցերեպայացուցած են իբրեւ «Քայլոտ» ի մարտական հրամանատար մը, որ գլխաւորած է արեւելեան Աֆղանիստանի մէջ պայքար մղած միաւոր մը:

Անոնք ըսած են, թէ Լիպիի եւ Սուլէյման Պու Հայի կողմէ նորագոյն հարցազրոյցներն ու պատգամները կը թուին փորձեր ըլլալ՝ բարոյականը բարձրացնելու, ի բացակայութեան Պըն Լատենի նման ղեկավարներու հրապարակաւ պատգամներու:

Ամերիկացի պաշտօնատարներու կարծիքով, Պըն Լատեն եւ անոր բարձրաստիճան փոխանորդները տակաւին ողջ են:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԹՈՒՐԻՔԻԱ Կ'ԱՅՅԵԼԷ

Իրանի ներքին գործոց նախարար Ապտուլա-հէտ Մուսաուրի Լարի Անգարա ժամանեց, Թուրք պաշտօնատարներու հետ տեսակցութիւններ ունենալու համար:

Լարի Անգարա կ'ընկերանայ բարձրաստիճան պատուիրակութիւն մը, առաջին հերթին հանդիպում ունեցաւ Թուրքիոյ ներքին գործոց նախարար Ռուշտու Քազիմ Եոլչէնէհի հետ: Խորհրդակցութիւններու առանցքը կազմեցին շրջանային վերջին զարգացումները եւ Իրան - Թուրքիա յարաբերութիւնները:

Մուսաուրի Լարիի Թուրքիա այցելութիւնը կը յաջորդէ Թուրքիոյ նախկին ներքին գործոց նախարար Սաատէթի թանթանի անցեալ տարւան Իրան այցելութեան:

Թուրքիա եւ Իրան վերջերս ձեռնարկած են բարձր մակարդակի շփումներու՝ ապահովական հարցեր քննարկելու առաջարկներով:

Նախքան Թուրքիա ժամանելը, Մուսաուրի Լարի Աւստրիոյ մէջ պետական պատասխանատուներու հետ քննարկած էր Իրան - Աւստրիա յարաբերութիւնները առաւել ամրապնդելու կարելիութիւնները:

ՆԱԽԱՐԱՐԱԳ խորհուրդը նախագահ ԿՕՐ. Էմիլ Լախուտի գլխավորությամբ երեկ գումար- ւած իր ժողովին վաերացուց քարահատման վայրերում սահմանափակման ծրագիրը և որոշեց Կանոնք փակել երկու ամիս: Անիկա նա- և որոշեց արտոնել քարահատման վայրեր միայն Լիբանանի արեւելեան լեռնաշղթային մէջ, բացառութեամբ յատուկ արտոնութիւն ստացողներուն:

Ժողովը նաեւ վաերացուց յատուկակա- ն լրատուութեան մասին տեղեկագիրը, որ կը նա- իստեմէ փակել կայօրինի կայանները եւ գա- նձել օրինական կայաններուն տուրքերը:

Բջիջային հեռաձայնի գծով վաերացուցաւ անոր ապապետականացումի գործընթացին հաղորդակութեան նախարարին մշակած պա- մանագիրը:

Ինչ կը վերաբերի մալուրով բանող ինքնա- շարժներուն, ապա որդեգրուցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխավորութեամբ գումար- ւած ժողովին ընթացքին գոյացած համաձայնու- թիւնը:

ԺՈՍՊԼԱԹԵՆ ԿՈՉ ՄԸ

Ընկերվար Յառա- դիմական Կուսակցու- թեան ղեկավար Ռա- իտ Ժոմայլաթ երեկ այ- ցելեց Երեսփոխան Ժան Օպէյտի, որուն հետ միակտրօք գտնուեցաւ, թէ Թաէֆի համաձայնագիրին մէջ եթէ փոփոխութիւն կամ սրբագրում պիտի կատարուի, այդ աշ- իատանքը պէտք է կատարուի խորհրդա- րանին մէջ եւ երկրի սահմանադրական հաստատութիւններուն ներկայութեան, առաջըր առնելու հա- մար Լիբանանը խա- թարող որեւէ վտան- գի:

Ժոմայլաթ Օպէյտի տուած իր այցելութե- նէն ետք կոչ ուղղեց երկրէն վտարելու բո- յոր անոնք, որոնք կը սպառնան ազգային միասնականութեան: Իր այս կոչին մէջ ան նկատի ունէր իսլամ կամ քրիստոնէայ որե- մէ կողմ, որ ազգային միասնականութիւնը խաթարող կոչեր կ'ընէ:

Ժոմայլաթ շեշտեց, որ իր կեցուածքը եր- բեք չէ փոխած, ինչ- պէս շատեր կը կար- ծեն: Ան քսաւ «Ֆրանս- սական գերիշխանու- թեան տակ գտնուած մեր օրերուն լիբանա- նէստութեան»:

Khabbaz-Orient Plus
Travel & Tourism
Varna
Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides, Visa & taxes not included
Cyprus 3 days 185\$
Bout trip to Cyprus & Greece 380\$
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական երեսփոխանական գրասենեակը կը յայտարարէ, որ Պետական Պաշտօններու հոր- հուրըրդ ղեկավարը կ'ընդունի մաքսատուներու վար- շութեան ներս գանազան պաշտօններու համար, առ այդ թեկնածուներու քննութիւն մրցանք պիտի կա- տարէ:

Այս օրընց ներս, Ա. կարգի հսկիչի պաշտօնին համար ղեկավարը ներկայացնելու պայմանագրում է Երեքշաբթի 23/7/2002, իսկ քննութիւն մրցանքը պիտի սկսի 6/8/2002ին. հսկիչի պաշտօնի ղեկավարը պայմանագրում է 30/7/2002, իսկ քննութիւնները կը սկսին 21/8/2002ին, իսկ հսկիչի օգնականի համար ղեկավարը պայմանագրում է 8/8/2002 եւ քննութիւնը կը սկսի 10/9/2002ին:

Պետական Պաշտօններու Հարցերու Խորհուր- ղը ղեկավարը կ'ընդունի նաեւ ելեմուտքի օմախարա- ռութեան ներս պաշտօններու համար:

Տուրքերու եւ գանձումներու աւագ հսկիչներու եւ աւագ հաշուապահներու պաշտօններուն համար ղե- մումներ ներկայացնելու պայմանագրում է 30/7/ 2002, իսկ քննութիւն մրցանքը կը սկսի 13/8/ 2002ին. տուրքերու եւ գանձումի հսկիչներու եւ հաշուապահի պաշտօններու համար ղեկավարը պայմանագրում է 6/8/2002, իսկ քննութիւնը կը սկսի 3/9/2002ին:

Այս պաշտօններուն ղեկավարը կ'ընդունուի պայման- ցներէն նշեք, որ թեկնածուն պէտք է լիբանանցի ըլլայ աւելի քան 10 տարի ի վեր, իսկ վկայական- ցներու պարագային կը պահանջուի պաշտօնային սկսեալ վկայականներ:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար ղեկ- վարը կ'ընդունուի պայմանական գրասենեակ, Շաղոյ- ցեան կեդրոն, 2րդ յարկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՄԱԶՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ՝ ԴԵՊԻ ԼՈՒԾՈՒՄ

Մագուլթով բանող փոխադրամիջոց- ները արգիւղ օրէնքին առաջացուցած հարցերուն լուծում գտնելու համար, վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ նա- խագահեց ժողովի մը, որուն ներկայ գտնուեցան ներքին գործոց, փոխադ- րամիջոցներու եւ ելեմուտքի նախա- րարներ՝ էլիաս Մըր, Նափիա Միքայիլի եւ Ֆուադ Սիմիտ, Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալա- մէ, Աշխատատեղերու Ընդհանուր Հա- մադաշնակցութեան նախագահ Ղաս- սան Ղըսն, փոխ նախագահ Պասսամ Թլէյս, ընդհանուր քարտուղար Սա- տէտին Համիտ Սաքըր, փոքր պաւե- ռու եւ վաներու սենտիքայի նախագահ Ապտալա Համատէ եւ Լեռնալիբանանի, Հիւսիսի, Հարաւի եւ Պեքաւայի փո- խադրամիջոցներու համադաշնակցու- թիւններուն նախագահները:

Ժողովէն ետք Ղըսն յայտնեց, որ մա-

գուլթի արգիւղում չորս միլիոն Լ. ոսկիի հատուցումին կողքին, մաքսատուքէ եւ մեքանիքի արձանագրութեան տուրքէ գերծ պիտի մնան պենզիոնով բանող փոխադրակառքերը. ասոր կող- քին, տարեկան 6 առ հարիւր տոկոսի սահմանը չանցնող փոխառուութիւն- ներ պիտի տրուին մինչեւ 50 միլիոն Լ. ոսկի: «Ան, որ մագուլթով բանող իր վանը փոխարինէ պենզիոնով բանող պարզ ինքնաշարժով, պիտի ստանայ չորս միլիոն Լ. ոսկիի յաւելեալ հատու- ցում», աւելցուց ան:

Ղըսն քսաւ, որ համոզուած է, թէ այս լուծումը արդար է, պայմանաւ որ արագ գործադրուի, եւ այդ գործադ- րութիւնը պէտք է սկսի այս լուծումի նախարարաց խորհուրդին կողմէ որ- դեզրուէն անմիջապէս ետք, որպէսզի վարորդները չուտով գանձեն եւ ան- գործ չմնան:

ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ԵՆՐ ՍԱԿԱՑՈՅՑ
ԼԻԲԱՆԱՆ – ՄԱԼԵՋԻԱ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար- լուրիւնը երեկ յայտա- րարեց, որ 90 օքթան առանց կապարի պէն- յիսին սակը 200 Լ. ոսկիի բարձրացում արձանագրած է, իսկ 95 օքթան պենզիոնի սակը՝ 100 Լ. ոսկի:

Այսօր ի զօրու կը դառնայ վառելիւնիւ- թերու հետեւեալ սա- կացոյցը. –

- 98 օքթան պենզի- ոնի թիթեղը՝ 21,500 Լ. ո. . . առանց կապարի 95 օքթան պենզիոնի թի- թեղը՝ 19,500 Լ. ո. . . առանց կապարի 90 օքթան պենզիոնի թի- թեղը՝ 19,400 Լ. ո. . . քա- ռիւղին թիթեղը՝ 7,700 Լ. ո. . . մալուրին թիթե- ղը՝ 7,100 Լ. ո. . .

ՇԱՍՈՒ ՅԱՐԿԱԲԱԾԻՆ

• Ճամբորդութեան պատճառով, 140 քառ. մետր տարածութեամբ, գեղատեսիլ դիրք, բնակարա- նի, գրասենեակի կամ դար- մանատան յարմար, Պաուշի, «Կալերի Իթի- հատ» ի մօտ, հեռ. 03- 226435 եւ 01-899718:

ԳՐԱԲՈՒՄ ՕՐ

Ը. Յ. Դ. «ԱՂԱՍԵԱՆ» ԱՎՈՒՄԲԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ 28 ՅՈՒԼԻՍ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԲԱՆԵՐԻՆ ԱՌԻԹՈՎ՝ ԴԱՅՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՕՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՄԱՐԶԻՆ ՄԵՋ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ ընդունեց Մա- լեյի փոխարարամիջոցներու հարցերու նախարար Լինկ Լիւնկ Սիլը, որուն հետ քննարկեց փոխադ- րութեան եւ փոխադրամիջոցներու առնչուած հար- ցեր եւ նշեալ մարկը. ինչպէս նաեւ երկկողմանի յա- ռաբերութիւնները բարելաւելու միջոցները:

Հանդիպումին ներկայ էր հանրօգուտ շինու- թեան եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեմիա Միքայիլ, որ մալեյիացի իր պաշտօնակի- ցին հետ ստորագրեց օղակու միջոցներով փոխադ- րութեան մարկին վերաբերող համաձայնագիր մը, որ կը վստահեցնէ նոյն մարկին մէջ Լիբանան – Մալեյիա համագործակցութիւնը:

Սիլ յայտնեց, որ իր այցելութեան նպատակն է օղակու փոխադրութեան մարկին ներս գործակցու- թեան համաձայնագիրին կնքումը՝ երկու երկիրնե- րուն միջեւ քրօնաշրջութեան եւ ներդրումներ կա- տարելու գործընթացը բարելաւելու համար:

ԸՆՏՆԵՐԻ ԲՈՒՐ ԱՆԴԱՍԵՐՈՒՆ ԱՌՈՂՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄՏԱՀՈՎՈՒԹԻՒՆ Է

SHOWER CABINE CENTER

Չեր լոգանքի վարագոյնները Bac a Douche et Bainoire փոխարինեցէ շարժական ալիմի- ցիոն եւ փլաթիթ կազմածներով, որոնք հիմ- ցուած են բժշկականօրէն ընդունուած միջա- գային չափանիշներու վրայ՝ ապահովելով մոր- քային եւ այլ հիւանդութիւններու մանրէներէ: Այլազան չափեր, մատչելի գին, տեղադրելը՝ ձրի. եւ երաշխաւորուած աշխատանք:

Դիմել՝ ԹԱՂԵՆՍ ԷԼՍԱՅԵԱՆ հաստ. Արտ Էլ Պաուշի, Բաճի Շամուն պողոտայ: Կեռ. 03-392088 եւ 03-476018:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՌԱԶՄԻԳ
RAZMIG
ՄԱՐՏ - ՅՈՒԼԻՍ 2002 ԹԻՒ 16/19

Ets. Avo Soulahian

Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526

igloo
54 U.S. Qt./51 L.
54 QUART Ultra

ՍԼԱԲ ԱՅՍՊԵՕՍ ԳՈՐԾԷ Կ'ԱՐՁԱԿԵՆ

Երկար տարիներ իր աշխատանքը լիուրի կատարած, ուսուցչութիւնը բառին ամբող- ջական իմաստով կեանքի վերածած, վա- տակաշատ ուսուցիչի մը կամ ուսուցչուհիի մը համար իսկապէս վիրաւորական է չոր ու ցամաք նամակ մը, որ կը տեղեկացնէ, թէ գործէ արձակուած է:

Նման վերաբերում անմարդկային է նախ պատուիրատուին հաշուով: Ըլլալ պատաս- իանատու մարմին ու այդպէս առանց հաշ- լի առնելու ուսուցիչին վաստակը, մաշե- ցուցած տարիներուն թիւն ու գործին որա- կը, նամակով մը տեղեկ պահել պայն, թէ՛ գործէ արձակուած եւ, երեսն կը հանէ մեր ազգային ցաւերէն ու հոգերէն հեռու ապ- ռող, բայց չես գիտեր ինչպէս մեր ազգային կառոյցները տնօրինելու կոչուած մարդոց ներաշխարհը:

Այս տողերը երբեք պիտի չգրուէին, եթէ ականատես չլլալի քանի մը օր առաջ գոր- ծէ արձակուած վաստակաշատ մանկավարժ ուսուցչուհիի մը արցունքներուն, երբ ալ չկրցաւ ինքզինքը պսակել ու սովորական խօս- քերէն ետք, այսպէս արտայայտուեցաւ:

«Ամբողջ կեանք մը վատնեցի. ի՞նչ ապուշ եմ եղեր. վարձատրութիւնս. չոր ու ցամաք նամակ, կամ անսիրտ խօսք մը, թէ՛ գալ տա- րի ուսուցիչ չես. գործէ արձակուած ես»:

Բոլորիս հաշուովն ազգային մեծ ամօթ է 40-50 տարի ուսուցչութիւնը ըրած, յոգնած ու աշխատանքի տարիքը բոլորած ուսուցիչ մը կամ ուսուցչուհիի մը այս ռճով գործէ արձա- կել:

Ոճը սխալ է. ու անիմաստ են այն բոլոր պատճառաբանութիւնները, որոնք կրնան տրուիլ:

Այս ուսուցիչները եւ ուսուցչուհիները նման «շքանշաններու» արժանի էին... Ինչ- չոր. որովհետեւ ծառայեցին անսակարկօ- ռէս:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

30ԱՄԵԱԿԻ ԿԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱԾԽՍԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆ
POLYGLOT TECHNICAL COLLEGE
Ըովանաւորութեամբ եւ ներկայութեամբ՝
ԱՊՏԵԼ ՌԱՀԻՄ ՄԸՐԱՏԻ
(Կրթական եւ բարձրագոյն ուսմանց նախարար)
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Յուլիս 2002, ժամը 8:00ին, Ռապիա ջլապի մէջ, Ռապիա:
Մուտք՝ հրաւիրատուսով
ԾԱՆՕԹ: Յետ վկայականաց բաշխման հանդէսին՝ ըրքբէյլ:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.
National Air Conditioner
360\$-էն սկսեալ զանազան վաճառանիշով եւ չափերով «Եր Ընտրտիսիոններ»
Պուրճ Համուտ - քաղաքապետարանի հրապարակ 2ԵՌԱԶԱՅՆՆ՝ 01-241000
2րդ մուտք, Սանթր Պաւլոյէն: Կառատուը ապահովուած:

12 ՅՈՒԼԻՍ – 18 ՅՈՒԼԻՍ 2002
ԵՐԿԻՐ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Էջ 3. «Առաջ, դէպի 1997 թ.» յօդուածը կը խօսի վերջին շրջանին Հայաստանի ներքին քաղա- քական կեանքին մէջ արցախեան տագնապի լուծ- ման գծով ՀՀԻ քաղաքական տեսակետները վե- րաքարոզութեան մասին:
Էջ 4. «Պայմանաւորուածութիւնը քաղաքական կատեգորիա չէ». հարցազրոյց Հայաստանի Հան- րապետական Կուսակցութեան անդամ Գագիկ Մի- ցասեանի եւ Սահմանադրական Իրաւունք Միութեան նախագահ Ըրանդ Խաչատրեանի հետ:
Էջ 5. «Չիմուկնիկից՝ քաղաքային մրցոյթի պրիզմայով» յօդուածը կ'անդրադառնայ պետական համակարգի պաշտօնեաներու դրութեան:
Էջ 6. «7500 երկնայ՝ ՀՕՄԻ որբայինսնմ ծրագ- րում». ՀՕՄԻ 10 տարիէ ի վեր Հայաստանի մէջ կ'իրականացնէ որբայինսնմ ծրագիր մը: Յօդուածը կ'անդրադառնայ այս ծրագրի 10ամեակին առի- թով իրագործելիք հանդիսութիւններուն:
Էջ 13. «Չարագուծ գալթակողութիւն». գրող եւ հրապարակախօս Չօրի Բալայեանի յօդուածը:

ՇԱՄԱՅՆՔԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿՈՐԾԱՆԵ ԼԻՔԱՆԱՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորբի երկն ընդունեց խմբագիրներու սենտիքայի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ սենտիքայի նախագահ Մըլիէմ Քարամի, որ յայտնեց, թէ արծարծած են լիքանաւան լրատուութեան դիմագրաւած հարցերը, եւ թէ Պրորբի պատրաստակամութիւն յայտնած է օժանդակելու անոնց լուծումին:

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշի Միչիկ Արեւելքի հարցերու լուծման համար նախաձեռնութիւնն ալ ոչ մէկ ակնարկութիւն չըրար խաղաղութեան արարական նախաձեռնութեան, նշեց Պրորբի եւ աւելցուց. «Մեր արարներու մեծ մեղքն այն է, որ ոչինչ կ'ընենք մեր հակառակորդներուն պարտադրելու, որ բանակցին մեկնելու: Այս բացթողումը պէտք է դարձանել, որովհետեւ Միացեալ Նահանգներ իսրայէլեան ակնոցով կը դիտեն եւ այս գէշ նշանք հրամայական կը դարձնէ, որ պզուշ մնանք մինչեւ Ամերիկայի խորհրդարանական ընտրութիւններու աւարտը»:

Քարամ յայտնեց, որ նաեւ խօսուած է իշխանութեան երեք պետերուն նախանցեալ օր Պաապտայի մէջ գումարած ժողովին մասին եւ Պրորբի յայտնած է, որ քննարկուած են բոլոր հարցերը, բայց մասնաւորապէս իսրայէլի խորհրդարանի երկիրներու եւ կապակերպութիւններու Փարիզ-2 ժողովի գումարանի հարցը:

«Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք այնպիսի կատարելալ նուիրումով կ'աշխատի Փարիզ-2ի համար կարծէք տարին լիքանանցի ըլլար: Մեզի նաեւ հարողութեամբ, որ ամերիկացիք պիտի չխոչընդոտեն այդ ժողովը: Բայց մենք պատասխանեցինք, որ բարար չէ, որ անտարբեր հանդիսատես ըլլան, այլ կարելոր է, որ մեր կողքին դերակատար ըլլան» ապահովելու համար

այդ ժողովին յաջողութիւնը, ըսաւ խորհրդարանի նախագահը: Լու Սնճելըսի մէջ գումարուած մարտնչութեան միջապային խորհրդարանի մասին խօսելով՝ Պրորբի յիշեցուց, որ ինք օրին կոչ ուղղած էր մարտնչներու Պուրոս Սֆէյր պատրիարքին, որ այդ ժողովին մասնակցողներուն մէկ մասը հաշտեցնէ նախ լիքանանի հետ նախքան Սուրիոյ հետ հաշտութիւնը: Ան յայտնեց, որ արտերկրի մէջ խամբարներու միջեւ հաղորդակցութիւններ կը կատարուէին անոր դիմաց հայաւանական խորհրդարանի գումարելու, եւ իր հետ խորհրդակցած են եւ ինք մերժած է, որովհետեւ եթէ մարտնչներու ժողովին պատասխան իսրայէլեան ժողով գումարուի, իրենց նպատակին հասնած պիտի ըլլան մարտնչներու ժողովին գաղափարը յղացողները:

«Արտերկրի լիքանանցիները գանձ մըն են, կոր չենք օգտագործեր. անոնց թիր հայրենաբնակներու քառապատկան է, եւ այս տրեւալը պիտի օգտագործել լիքանանի քարտուրեան, գերիշխանութեան եւ միութեան համար», ըսաւ ան: Պրորբի դիտել տուաւ, որ լիքանան ոչինչ չըրած է արտերկրի լիքանանցիներուն համար, եւ կը մերժէ անոնց մասնակցութիւնը ներքին քաղաքական կեանքին, մինչ անոնց ներդրումները կրնան փրկել լիքանանը:

«Պէտք է պայքարիլ համայնքային լարերու ճայնին վերադարձին դէմ. համայնքայնութիւնը լիքանանի քաղաքական կեանքը կ'ակնաւորէ եւ կը կործանէ լիքանանը», կ'ուշացուց ան:

«Տեսնալիս վիճակին մասին խօսելով՝ Պրորբի դիտել տուաւ, որ ամերիկեան սպասուիքները նորութիւն մը չեն եւ Ուաշինկթըն արդէն Իսրայէլի ակնոցով կը դիտէ Միչիկ Արեւելքի հարցերը: «Պոպ կրահամի հետ հանդիպումն չկայացաւ, որովհետեւ ես պայն կը ձանչնամ, ինքն այլ պիտի ձանչնայ: Ուստի ծե-

րակոյտին պատուիրակութիւնը խորհրդարանի անդամներու հետ լիքանանի հետ չէր»:

«Պէտք է պայքարիլ համայնքային լարերու ճայնին վերադարձին դէմ. համայնքայնութիւնը լիքանանի քաղաքական կեանքը կ'ակնաւորէ եւ կը կործանէ լիքանանը», կ'ուշացուց ան:

«Տեսնալիս վիճակին մասին խօսելով՝ Պրորբի դիտել տուաւ, որ ամերիկեան սպասուիքները նորութիւն մը չեն եւ Ուաշինկթըն արդէն Իսրայէլի ակնոցով կը դիտէ Միչիկ Արեւելքի հարցերը: «Պոպ կրահամի հետ հանդիպումն չկայացաւ, որովհետեւ ես պայն կը ձանչնամ, ինքն այլ պիտի ձանչնայ: Ուստի ծե-

«Տեսնալիս վիճակին մասին խօսելով՝ Պրորբի դիտել տուաւ, որ ամերիկեան սպասուիքները նորութիւն մը չեն եւ Ուաշինկթըն արդէն Իսրայէլի ակնոցով կը դիտէ Միչիկ Արեւելքի հարցերը: «Պոպ կրահամի հետ հանդիպումն չկայացաւ, որովհետեւ ես պայն կը ձանչնամ, ինքն այլ պիտի ձանչնայ: Ուստի ծե-

«Տեսնալիս վիճակին մասին խօսելով՝ Պրորբի դիտել տուաւ, որ ամերիկեան սպասուիքները նորութիւն մը չեն եւ Ուաշինկթըն արդէն Իսրայէլի ակնոցով կը դիտէ Միչիկ Արեւելքի հարցերը: «Պոպ կրահամի հետ հանդիպումն չկայացաւ, որովհետեւ ես պայն կը ձանչնամ, ինքն այլ պիտի ձանչնայ: Ուստի ծե-

«Տեսնալիս վիճակին մասին խօսելով՝ Պրորբի դիտել տուաւ, որ ամերիկեան սպասուիքները նորութիւն մը չեն եւ Ուաշինկթըն արդէն Իսրայէլի ակնոցով կը դիտէ Միչիկ Արեւելքի հարցերը: «Պոպ կրահամի հետ հանդիպումն չկայացաւ, որովհետեւ ես պայն կը ձանչնամ, ինքն այլ պիտի ձանչնայ: Ուստի ծե-

ՈՉ ՈՔԻ ՊԻՏԻ ԹՈՅԼԱՏՐՈՒԻ ...

Ծարուակուած Ա. Էջէն

Իհն հետ արծարծեց քաղաքական եւ տնտեսական հարցերն ու հիւսիսային Մեքսիկոյ կարիքները:

Ժեռտայի մէջ լիքանանցի գործարարներու խորհուրդի պատուիրակութիւնը նախագահ Լահուտի ներկայացուց իր մշակութային, տնտեսական, կրթաշրջային եւ բարեփոխական աշխատանքները, ինչպէս նաեւ ժեռտայի մէջ Լիքանանի հետ հիւսիսային կառուցման ծրագիրը, որ պիտի ամբողջանայ այս տարի՝ մաղթելով, որ նախագահ Լահուտ կատարէ հիմնարկէքը:

Նախագահ Լահուտ բարձր գնահատեց խորհուրդին ճիգերը, որոնք մարմնացուցած են հայրենաբնակ եւ արտերկրի լիքանանցիներուն միջեւ գործակցութիւնը:

Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Սէնտակաւ Արաբիոյ Ֆահտ թագաւորի եւ գահաժառանգ իշխան Ապտալայի լիքանանցիներուն նկատմամբ ցուցաբերած հոգածութեան, անոնց տրամադրած օժանդակութիւններուն եւ իբրանանեան տնտեսութեան կորստի կանգնելուն համար:

Նախագահ Լահուտ երկն նաեւ ընդունեց լիքանանեֆրանսական միութեան պատուիրակութիւնը, որ ներկայացուց ընկերային, մտաւորական եւ մշակութային մարմերէն ներս իր գործունէութիւնը եւ ապագայի ծրագիրները:

Նախագահ Լահուտ ողջունեց այս ճիգերը, որոնք կ'ամրապնդեն լիքանանեֆրանսական պատմական յարաբերութիւնները, եւ անընդհատ կապի մէջ կը պահեն երկու ժողովուրդները:

Նախագահ Լահուտ նաեւ վեր առաւ Լիքանանի մէջ գումարուելիք Ֆրանսիոս Երկիրներու Կապակերպութեան վեհաժողովին կարեւորութիւնը, որ պիտի հաստատէ արեւելքի եւ արեւմուտքի միջեւ Լիքանանի դերը եւ անոր ներկայութիւնը շրջանային եւ միջազգային բեմերուն վրայ:

Ան նաեւ բարձր գնահատեց այս ժողովին համար Ֆրանսայի եւ նախագահ Ժաք Շիրաքի տրամադրած օժանդակութիւնները:

Նախագահ Լահուտ երկն նաեւ ընդունեց բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն կոր. Ռէմոն Ապարը:

ՀԸՆՏԻ, ԵՈՒՆԷՍ ԵՒ ՊԱՍԻԼ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ

Ձիւնուորական վճարեկ առեանը երէկ որոշեց վերջնականապէս փակել արգիլեալ Լիքանանեան Ուժեր Կուսակցութեան պատասխանատուներէն՝ Թուֆէ Զընտի եւ լրագրողներ Հապիպ Եուլէսի եւ Անթուան Պասիլի գաղտը, երէկուան դատավարութենէն ետք:

Նշենք, որ վերոյիշեալ երեքը ձերբակալուած ու արգելափակուած էին իսրայէլեան ուժերու եւ պաշտօնատարներու հետ կապեր ունենալու եւ տեղեկութիւններ փոխանակելու յանցանքով:

Հընտի շէտեց, որ խորքին մէջ եւ փաստօրէն ոչ մէկ ապացոյց կայ, որ 1995ին ինք կապեր ունեցած է իսրայէլացի ղեկավարներու հետ, ինչպէս նաեւ ոչ մէկ փաստ կայ, որ ինք Փարիզի մէջ տեսակցութիւններ ունեցած է Չարայի հետ:

Հընտի, Պասիլ եւ Եուլէսի իրենց կարգին դատարանէն խնդրեցին, որ զիրենք «անմեղ» հռչակէ:

Իրենց կարգին արգելափակեալներու պաշտպան փաստաբանները խնդրեցին, որ դատարանը զանոնք նկատէ անմեղ՝ դիտել տալով, որ այն յանցանքները, որոնցմով դատապարտուած են Հընտի, Եուլէսի եւ Պասիլ, գոյութիւն չեն ունեցած եւ ոչ մէկ վնաս հասցուցած են Լիքանանի կամ լիքանանեան պետական որեւէ հաստատութեան:

Հետեւաբար Թուֆէ Զընտի եւ Հապիպ Եուլէսի ստացան 15 ամսուան բանտարկութեան պատիժ, իսկ լրագրող Անթուան Պասիլ՝ 2,5 տարի:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԿԱՆ
ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՌՈՒԹԻՒՆ (ՀԷՀՈՍ)
WELCOME SUMMER PARTY
Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 13 Յուլիս 2002ի երեկոյեան ժամը 10:00ին, PERLA PLAYA Ի մէջ:
ՍԱԿ ՍԵԿ ԱՆՉԻ՝ 20,000 Լ. Ո.

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԱՅԱՍՏԱՆ
Վան - Մուշ - Անի
Աղբամար - Կարս - Արարատ...
\$985 (Full Board)
Օգոստոս 23 - Սեպտեմբեր 1 (16 օր)
Ձեր տեղերը ապահովելու համար դիմել
ANSER TOURS հեռ. 01-582044-5
01-582870-1
Աւետիս Գափարեան, հեռ. 03-283347
ԵՐԹԵՒԵԿԸ ՕԳՆԱԵՐՈՎ

IGOL MOTOR OIL
FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՄԻԱՄԱԿԱՆ ԸՍԻՔ...

Անարդարութեանց ենթարկուած փոքր ժողովուրդները ընդհանրապէս հակամէտ են «մեծերու» իւրաքանչիւր խօսքը երկիրաձուլութեամբ ունկնդրելու՝ շուտով անդրադառնալու համար, որ լաւ բայց արդարութիւնը ո՛ր մնաց:

«Մեծերը», իրենց կարգին, հակամէտ են կարծելու, որ իրենց ամէնէն անհեթեթ արտայայտութիւնն անգամ լուրջի պիտի առնուի փոքրերուն կողմէ, նախկին արքայազնի աշակերտի մը նման, որ փութկոտութեամբ կը ջանայ ուսուցիչին թելադրանքը կատարել:

Եւրոխորհուրդի գլխաւոր քարտուպար Ուոլթըր Շուլիմըրը, ինչպէս նաեւ իրեն նախորդած բոլորը, որոնք երեւան կը ժամանեն Արցախի կամ այլ հարցերով, կը սիրեն համբերութեան, լայնախոհութեան, գործակցութեան ոգիի եւ նման նիւթերու մասին դասասօսութիւններ տալ հայութեան: Ի դէպ՝ այս գաղափարները այդքան ալ գէշ բաներ չեն: Բայց երբ կը խուսափին մէկ հիմնական նիւթի՝ արդար լուծումի մասին խօսելէ, ափսոս կ'ըլլայ վատնուած ճամբու եւ կեցութեան հսկայ ծախսին:

Շուլիմըր մեզի կը խօսի «սիւսիական երկուորակներու» պատկերով: Այսինքն, Հայաստան եւ Արցախը միաժամանակ երկուորակներ են, որոնք իրենց մօր արգանդին մէջ իրարու միացած են: Սակայն տեղին չէ՝ Շուլիմըրի պատասխանելը, թէ բնասօսական առումով եւ վերջին հաշուով, սիւսիական ծնունդները բնական չեն, չէ՛:

Կրնար աւելի գէշը եւս պատահիլ: Շուլիմըր կրնար խօսիլ ոչ թէ «սիւսիական», այլ՝ «նմանապէս երկուորակներու» (Identical twins) օրինակով, այսինքն՝ կրնար ըսել, թէ հայերն ու ազերիները... ճշմարտութիւնը նուազ ծնունդներ են, որոնք դժուար է իրարմէ գանգաղելը, ալ ի՞նչ հակամարտութիւն, ի՞նչ շարաքաղ, ի՞նչ շրջափակում... (Աստուած իմ...):

Արդար լուծումի յանգելէ ետք, ալ ո՞վ դժ պիտի կենայ գործակցութեան, լայնախոհութեան եւ բոլոր ըստակի գիրկընդխառնումներու, սիւսիական ըլլան առոնք, թէ բնական: Հոն թաղուած է շատ գլուխը: Հարցի լուծման բանալին կը կայանայ արդարութիւնը վերահաստատելուն մէջ: Եւրոպա եւ միւս «մեծերը» տրամադիր են օգնելու արդարութեան վերահաստատման:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

ԷՃԵՒԻԹ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ՄՆԱՐԷՆ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՐԵԱՅ ԱՅՅԵԼՈՒՆ ԴԻՄԱԿՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անցեալ շաբաթ «Տըթալմագ աֆ Լանտըն» թերթը «Եւրոպայի հիւանդ մարդը» խորագրով յօդուածի մը մէջ հրատարակեց երկար տեղեկագիր մը՝ վարչապետ Պրելինսթի Էնթոնիի հիւանդութեան մասին:

Մասնաւոր թուրք ղեկավարը ժամանակէ մը ի վեր կը առաւապի շարք մը հիւանդութիւններէ, սակայն անցնող երկու ամիսներուն անոր առողջութիւնը այն աստիճան վատթարացաւ, որ ան ստիպուեցաւ մնալ անկողին՝ բացակայելով պետական գրեթէ բոլոր կարեւոր ժողովներէն եւ պարտականութիւններէն: Հակառակ ասոր, սակայն, ան յամառօրէն կը մերժէ հրատարական տարու բոլոր կոչերը: Այս քաղաքական անդամալուծութիւնը քանդիչ ազդեցութիւն ունեցաւ Թուրքիոյ տկարացող տնտեսութեան վրայ:

Հակառակ ասոր որ Էնթոնի չ'անկողնէն ելլել իր պետութիւնը լրիւ քառասկիւն վիճակէ մը դուրս բերելու համար, ան ոտքի ցատկեց՝ անցեալ Ուերթաթ ղրմաւորելու համար ամերիկեան - հրէա-

կան «Պեյ Պրիք» հեղինակաւոր կազմակերպութեան պատասխանատուն: Ի՛նչը կրնար մղած ըլլալ տարիքոտ եւ տկար էնթոնի յայտարարումը՝ անտեղեկութեամբ իր անտեղեկութեան ընթացքին հետ մը զայլ մը առնելու՝ աւելի վտանգելով իր վատթարացող առողջութիւնը: Հաւանաբար ան այս մէկը ըրաւ «քաւելու» համար պարտաւորութիւններու դէմ ցեղասպանութիւն գործելու յանցանքով Իսրայէլը ամբաստանած ըլլալու իր «մեղաք»:

Հակառակ իր կրկնած քաղաքացիական պարտաւորութիւններուն, Իսրայէլի պետութիւնը եւ Ամերիկայի հրեաները այնքան զայրացած էին, որ Էնթոնի յայտարարութեամբ անոր հակառակ վրայ սողալ եւ անձնապէս ներուժ խնդրել ամերիկացի - հրեայ ղեկավարներէն:

Ըստ թրքական «Անալուծութիւնը քանդիչ ազդեցութիւն ունեցաւ Թուրքիոյ տկարացող տնտեսութեան վրայ: Հակառակ ասոր որ Էնթոնի չ'անկողնէն ելլել իր պետութիւնը լրիւ քառասկիւն վիճակէ մը դուրս բերելու համար, ան ոտքի ցատկեց՝ անցեալ Ուերթաթ ղրմաւորելու համար ամերիկեան - հրէա-

կան «Պեյ Պրիք» հեղինակաւոր քաղաքական աշխատանքներուն դէմ: Թուրքիա կատարած իր այցելութեան ընթացքին Հիտլերն տեսակցեցաւ նաեւ նախագահ ԱՆՄէթ Նեհտէթ Սեզէրի եւ արտաքին գործոց նախարարութեան գանազան պաշտօնեաներու հետ:

Ամերիկահայ կազմակերպութիւններ պէտք է Հիտլերին հետ տեսակցութիւն մը խնդրեն՝ ամերիկեան Բոնկրէսին մէջ թրքական աշխատանքներուն հակադրելու եւ ամերիկեւհրէական քաղաքական կազմակերպութիւններու եւ Թուրքիոյ միջեւ հաստատուած գործակցութեան իրենց լուրջ մտահոգութիւնը յայտնելու համար: Հայկական կազմակերպութիւնները պէտք է Հիտլերին եւ հրէական այլ կազմակերպութիւններու ուշադրութեան յանձնեն, որ իրենց շարունակուող հակահայ աշխատանքները աշխարհի տարածքին գտնուող հայերը պիտի մղեն հակառակին՝ երկու ժողովուրդներուն միջեւ վիճակ մը յառաջանցելով:

ՅԱՐԱԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ «Քալիֆոռնիա Բուրիեր»

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՄԱՐԱՆ

2002-2003 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աստուծոյ ապաւինելով՝ 2002-2003 տարեշրջանի սկզբնական արձանագրութիւնները նախկին եւ նոր աշակերտներու համար, կը սկսին 17 Յունիս 2002ին եւ կը շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2001, ամէն օր առաւօտեան ժամը 8:30-12:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն):

Այս տարի եւս երկրորդական Բ. կարգը ունի երկու բաժիններ, գիտական եւ HUMANITIES.

- Նորեկ աշակերտներէն կը պահանջուի՝ Ա. - վերջին 2 տարուան վիճակագրոյց Բ. - Ինքնութեան թուղթի լուսապատճէն Գ. - Երկու նոր լուսանկար Դ. - Բարի վարուց վկայագիր Ե. - Նախկին վարժարանէն աշակերտին պետական թիւը՝ վաւերացուած: ● ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան առաւօտեան ժամը 10:00ին: Զորեքշաբթի, 11 Սեպտեմբեր 2002 - Լեզուական նիւթեր: Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր 2002 - Թուրքա-նորիւն եւ գիտական նիւթեր: Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002 - Պատմ. աշխարհագրութիւն եւ այլ նիւթեր:

ՎԵՐԱՄՈՒՏ

- Ա. - BREVET եւ BACC II Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002: Բ. - Երկրորդական, Միջնակարգ եւ Նախակրթարան - Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր 2002: Գ. - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ - Զորեքշաբթի, 2 Հոկտեմբեր 2002: Նկատի ունենալ հետեւեալները.- 1.- Ընդունման տարիք՝ 2 տարեկան 7 ամսու 2.- Նախապիտանքով օժտուած բացօթեայ խաղափայլ: 3.- Ուսուցման արդիական միջոցներ: Համակարգիչի դասընթացք: 4.- Յատուկ սակ ծիլ դասարանի աշակերտներու համար: 5.- Հարկ եղած պարագային տեսակցիլ ման. 6.- Կապարտիպանուիչին հետ, Յունիս 24-28 եւ կապարտիպանուիչին հետ, Յունիս 24-28 եւ Սեպտեմբեր 2-6, կէսօրէ առաջ ժամը 10:00-12:00: Ամառուան ընթացքին գրադարանը բաց է Զորեքշաբթի 10, 24 Յուլիս եւ 4, 18 Սեպտեմբեր 2002ին: Գրախանութիւնը բաց է Երեքշաբթի, 10 Սեպտեմբեր 2002էն սկսեալ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՎԱԿԱՅ ԲԱՐՈՉՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ՀԱՅ ՎԱՅՐԵՆԻՆԵՐԸ» ԳԱՏԵԼՈՒ ԱԶԵՐԻԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ

Ազգայնական «Կազէր 525» թերթը վերջերս հարցազրուեց, որ Շուլիմըրի ազգերիական գաղութը կ'աշխատի «26 Փետրուար 1992ին իր յիշատակի Յեղափոխութիւնը» դատելու համար: Լա Հէյի Միջազգային Ատեանին առջեւ:

Թերթին համաձայն, գաղութը Փետրուար 25ին նամակով մը դիմած է ատեանին՝ պահանջելով, որ «Հայ ոճրագործները» դատուին: Նամակին կին մէջ նշուած է, թէ Հայերը ուստական գինեակի մէջ սպաննած են 1275 ազերիներ, որոնցմէ 106ը՝ կիներ, 83ը՝ մանուկներ: Նամակին մէջ նաեւ նշուած է, թէ հայերը առեւտրային են 1275 ազերիներ, որոնցմէ 150ին՝ ճակատագիրը ցարդ կը մնայ անորոշ:

Նամակին մէջ գաղութը պահանջած է, որ ատեանը քննէ դէպքը: Ազերիները պատրաստակամութիւն յայտնած են «պատերազմական ոճիրները գործող անձներուն» մասին տեղեկութիւններ փոխանցելու ատեանին: Թերթը կը տեղեկացնէ, թէ Շուլիմըրի ազգերիական կազմակերպութեան նախագահ Մահաբէ Սապապի յուսարարութիւն յայտնած է այս հարցին համար, դիտել տալով, որ Փետրուարին Լա Հէյի ատեան ուղար-

կուած նամակը ցարդ կը մնայ անպատասխան: Ան աւելցուցած է սակայն, որ գաղութը կը հետապնդէ հարցը եւ վերջերս երկրորդ դիմում մը կատարած է միջազգային ատեանին:

ՆԱԵՒ ԲՈՂՈՒԹԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Ազգայնական «Մարք» լրատու գործակալութիւնը իր կարգին կը տեղեկացնէ, թէ Եւրոպական ինքնակազմակերպութեան ղեկավարութիւնը կ'ընդգրկէ հրատարական վեհաժողովը: Տեղեկագիրը կ'ընդգրկէ գնահատումներ վեհաժողովի անդամ երկիրներու օրէնքներուն մասին: Անոր մէջ նշուած է, թէ

Հայաստանի սահմանադրութիւնը կը հակասէ միջազգային օրէնքին:

Լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ Եւրոպական ինքնակազմակերպութեան 27 երկիրներ ստորագրած են այս տեղեկագիրը: Տեղեկագիրին համաձայն, Հայաստանի սահմանադրութիւնը կ'ընդգրկէ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կցելու իրաւունքը: Տեղեկագիրը կ'ընդգրկէ 1989ի որոշումը եւ ազգերիական օրէնքները Լեռնային Ղարաբաղի մէջ չեղեալ նկատող 1992ի բարեփոխումը:

«Մարք» կը յայտնէ նաեւ, որ տեղեկագիրը նախապէս քննարկուած էր վեհաժողովի ամբաստանողներու կողմէ, որ վեհաժողովին կողմէ ներկայացուցիչներ այցելեն Հայաստան, քննեն կազմակերպութեան, եւ ապա յաջողորէն նիստին քննարկումները շարունակուին:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքեն «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առճակատ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00: ՄԱՀԱԶԴԻՆԵՐԸ բացառութիւն է: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու ճանապարհը կայ:

ՀԱՅՐԵՆԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի տնօրէն Արամ Համբարեան վերջերս հանդիպում մը ունեցած է Ուաշինկթըն այցելող հայրենի խումբ մը լրագրողներու հետ: Հանդիպումին ընթացքին Համբարեան յայտնած է, թէ Օսմանեան կայսրութեան մէջ 1915ին պատահած Հայկական Յեղասպանութեան ճանաչումը նախ եւ առաջ բարոյական հարց մըն է, աւելցնելով, որ Թուրքիա տակաւին կը շարունակէ սպառնալ Հայաստանին եւ ուրանալ Հայկական Յեղասպանութիւնը: «Հայաստան պէտք է հատուցում ստանայ եւ վերատիրանայ իր հողերուն», շեշտած է Համբարեան: Ան նշած է, թէ 2000ին Հայաստան մեծ յաղթանակներ արձանագրեց ամերիկեան Բոնկրէսին եւ շարք մը այլ երկիրներու մէջ, ինչ որ «խուճապի մատնեց Անգարան եւ իր գաղնակիցները եւ մղեց զանոնք պատասխան քայլերու դիմելու»:

Սուտելով «Հայ - Թրքական Հայտնութեան Յանձնաժողով»ին մասին, Համբարեան ըսած է, որ Հայկական Յեղասպանութեան ճանաչման գծով յանձնաժողովի քննարկումները ձախողած են: «Նոյնիսկ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ մասնակից չէ բանակցութիւններու գործընթացին: Հետագային միայն ի յայտ եկաւ, որ այդ հանդիպումներուն ծախսերը կը հոգար նախարարութիւնը, նշած է Համբարեան: Ան յայտնած է, թէ յանձնաժողովի ստեղծման նպատակը Հայկական լոպիին եւ անոր ղեկաւարտական կարողութիւններուն ջլատումն էր: Նշելով, որ «Հայ - Թրքական Հայտնութեան Յանձնաժողով»ին ստեղծումը կ'առաջադրէր խոչընդոտել Հայկական Յեղասպանութեան ճանաչումը, Համբարեան ըսած է, որ ճիշդ պիտի ըլլար, եթէ բանակցութիւններուն մասնակցէին Հայաստանի եւ Թուրքիոյ կառավարութիւնները, քաղաքական ուժերը եւ Սփիւռքի ներկայացուցիչները:

Լեռնային Ղարաբաղի տագնապին խաղաղ լուծման գործընթացին անորոշառնալով, Արամ Համբարեան շեշտած է, թէ ճիշդ չէ, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակին նախագահները նախապայմաններ ներկայացնեն տագնապի առնչակից կողմերուն: Ան աւելցուցած է, թէ Լեռնային Ղարաբաղը իրրեւ կողմ պէտք է մասնակցի բանակցութիւններուն:

ՂԱՐԱԲԱԳԻ «ԱԶՍԱԳՐՈՒՄԸ» ՊՈՒՆԵՆՆԵՐԸ...

Ազգայնական «Ենի Մուսալաթ» թերթը կը տեղեկացնէ, թէ «Ղարաբաղի Ազատագրութեան Կազմակերպութիւնը» Յունիս 6ի նիստին ընթացքին Եւրոպայի Պիւլիքի Պաքիլարը ընտրած է Պոլսոյ իր գրասենեակին ներկայացուցիչը: Կազմակերպութիւնը նաեւ որոշած է գրասենեակներ ունենալ Անգարայի, Իզմիրի եւ Ատանայի մէջ: Այս գրասենեակները եւս պիտի վարէ Պաքիլար: Թերթին համաձայն, Պաքիլար Աղտամ Գահագէն գրաքննադատ բանաստեղծ մըն է:

ՀԱՅ ԱՒԵՏ. ՔՈՒԼԵՃ (ՄԵՄԵՐ ՓՈՂՈՑ, ՀԵՆ. 349816) 2002-2003 ՏԱՐԵՇՐՁԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- 2002-2003 տարեշրջանին Հայ Աւետ. քոլեճը պիտի ունենայ բողոքեան 12րդ պաշարէն ղաւարան: 2.- Նորեկ աշակերտները պարտին կանխաւ դիմել: Նորեկներուն դիմումները կ'ընդունուին ամէն օր, կէսօրէ առաջ ժամը 9:30էն 12:30, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն: 3.- Կրթնապաստի դիւրնութիւններ կը տրուին ուսումնապէս փայլուն եւ նիւթական դժուարութիւն ունեցող աշակերտներուն: 4.- Բոլոր շրջաններու համար օթոպիւսի սպասարկութիւնը ապահովուած է: 5.- Ամառնային շրջանին դպրոցին գրասենեակը բաց է Յուլիս եւ Սեպտեմբեր ամիսներուն Երկուշաբթիին Ուրբաթ, իսկ Օգոստոսին բաց է միայն Զորեքշաբթի օրերը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՀԱՄՕ ՕՂԱՆՁԱՆԵԱՆ» ՄԱՍՆԱԳԻՐ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Տեղի պիտի ունենայ այսօր՝ Ուրբաթ, 12 Յուլիս 2002, երկույտեան ժամը 8:00ին, «Անի» ակումբին մէջ: ԾԱՆՕԹ.- Ժամը 8:30ին ներկայանալու թիւ մեծամասնութիւն պիտի համարուի: ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ռուսագրական

ԿՈՐՄՈՒԿԾ ՔԱՂԱՔՆԵՐ

ԱՐԵՎՍԱԳԻՏԱԿԱՆ ԳԵՐՉԱՅՈՒՆ ՍԱՐԵՐՈՎ ԶԻՆՈՒԱԾ ՍՈՒՉՈՐԴՆԵՐ ԸՆԱԿՐԵԱԾ ԻՐԵՐ ԿԸ ՅԱՅՆԱԲԵՐԵՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԶՐԱՄՈՅՆ ԱՆՅԵԱԼԵՆ. «ԹԱՅՍ» ԶԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԿԸ ԳՐԷ.

Միջերկրականի հոսանքները ցեխի ծով մը կը ստեղծեն Նեղոսի գետաբերանին մօտ: Սակայն անցեալ տարի, երբ սուզորդներ ֆրանսացի հնայնագիտական Ֆրանսեզ Ֆրանսեզ կողմից գլխավորութեամբ Ուպոլեթի ծոցը նետուեցան, ջուրին յատկութիւնը դիւրացուց անոնց առաքելութիւնը: Մովուն մակերեսէն 6,5 մետր վար, կրաքարէ զանգուրու ծածկերը մտնելու տիրու մաքրելու միջոցին սուզորդներէն մէկը նկատեց կրանիթէ խոշոր քար մը, որ խրած էր կաւային ցեխի մէջ: Սուզորդները զայն դարձուցին կարգաւոր համար անոր վրայ արձանագրուած մեհնագրութիւնը, որ կատարեալ վիճակի մէջ պահպանուած էր շուրջ 2000 տարի: «Մենք անցեալէն եկած այս պատգամը ստացող առաջին անձերը եղանք,- կ'ըսէ Կոտիո:- Յանկարծ զգացինք, որ ուղղակի կապի մէջ մտած էինք հնադարեան աշխարհին հետ»:

Անոնք աւելին ըրած էին: Մեհնագրութեան ստորջրային թուանի (տիթիթի) լուսանկարները առնելէ ետք անոնք ե - նամակով փարիզ ուղարկելէ ետք Կոտիո հաստատած է, թէ սուզորդներու իր խումբը գտած էր փաստը Հերակլիոն քաղաքին յայտնաբերումին: Այս քաղաքը առասպելի կարգ անցած հնադարեան դարպասն էր դէպի Եգիպտոս եւ ջրամոյն եղած էր շուրջ 1300 տարի առաջ:

Հնադարեան Եգիպտոսի ծովագերեայ բնակավայրերը, որոնք ջրամոյն եղած են երկրաշարժերու եւ հողի հակայական սահունքներու պատճառով, աստիճանաբար լոյս աշխարհ կը բերուին ծովուն խորերէն: Դարեր շարունակ պատմագիտի իրենց տեղեկութիւնները հիմնած են Հերոտոտոսի եւ Սթրաբոնի նման պատմիչներու ուղեւորի վկայութիւններուն վրայ, վերակառուցելու համար կղզեպատարալի եւ Եգիպտոսի պտղեմիներու թագաւորութեան (Ն.-Ք. 305էն 330) այլ իշխաններու պատմութիւնները: Սակայն վերջին տասնամեակին այսօրուան Աղեքսանդրիոյ ծովափին կատարուող ստորջրային պեղումներ ի յայտ բերած են հազարաւոր արուեստի իրեր, ինչպէս՝ արձաններ, սփիւքսներ, գոհարեղէն եւ մետաղադրամներ, որոնք կարեւոր տեղեկութիւններ կ'ընձեռեն դասական ժամանակներու ամէնէն խառնուրդ ժամանակաշրջաններէն մէկուն վերաբերեալ: «Յայտնաբերումները մեզի կը ներշնչեն մեր աշխատանքը շարունակելու յոյսը,- կ'ըսէ Եգիպտոսի Հնագիտական իրերու Գերագոյն Սորհուրդին պատասխանատուներէն՝ Իպարահիմ Տարուհի:- Յարգ ինչ որ յայտնաբերած ենք, ջրամոյն իրերուն նուազ քան 1 առ հարիւր կը ներկայացնէ»:

Հնամասն արքայ ամէնէն յատկանշական իրագործումը Հերակլիոնի յայտնաբերումն է: Քաղաքը կոչուած է յոյն դիցաբանական հերոս Հերակլիսի անունով եւ աւելի հին է, քան մօտակայ Աղեքսանդրիան, զոր հիմնած է Մեծն Աղեքսանդր Ն.-Ք. 332ին: Կոտիոյ հնայնագիտութեան Եւրոպական Հիմնարկին, քաղաքին վայրը մօտաւոր կերպով ճշդած էր 2000ին: Սակայն հաստատուած կատարուեցաւ անցեալ տարուան պեղումներէն ետք: Ամէնէն յայտնական ժամանակ Ն.-Ք. 380ին Նեքթանես Ա. ի կառուցած մղոնաքարն էր, որուն վրայ մաքսային տուրքերու վերաբերող արձանագրութեան մը մէջ շրջանին անունը կը յիշատակուի իրեն թոնիս, որ Հերակլիոնի եգիպտական անունն էր: Կոտիոյ սուզորդներու խումբը նաեւ դուրս բերած է վարդագոյն կրանիթէ սրբարան մը, որ հնագիտներու համաձայն, կը պատկանի Ամուն-Կերէպի տաճարին, ուր Հերոտոտոսն այցելած էր Ն.-Ք. 5րդ դարուն: Յայտնաբերուած են նաեւ Հերակլիոնի այս տաճարին պատկանող հսկայական 3 արձաններ, իւրաքանչիւրը՝ 5.7 մետր բարձրութեամբ եւ 15 թոն ծանրութեամբ. անոնք կը պատկերեն Նեղոսի արգասաբերութեան ասուած Հափին, փարաւուն մը եւ թագուհի մը:

Այս տարուան պեղումները ի յայտ բերին տպաւորիչ այլ գտններ, որոնք կ'ապացուցեն, թէ Հերակլիոնը որոշ ժամանակ մը պիտի շարունակէ հաճոց պարգեւել հնագիտներու: Օրինակ, արձանի մը վրայ արձանագրութիւն մը ցոյց կու տայ, թէ Հերակլիոնի տաճարը գործածուած է պտղեմիներու թագաւորութեան ամբողջ ժամանակաշրջանին: Տաճարին վայրէն յայտնաբերուած գտածոներուն շարքին են ծիսակատարութեան յատուկ պրոնզէ իրեր, ինչպէս՝ սագի կտուցի ձեւով շինուած բռնիչով խնկաման մը եւ անգլի գլուխով թագաւորուած շերտի մը: Բիւզանդական ոսկեգրամներու յայտնաբերումը կ'ապացուցէ քրիստոնէական վանքի մը գոյութիւնը եւ կը փաստէ, թէ Հերակլիոնը տակաւին բնակուած էր մինչեւ Յ.-Ք. 8րդ դար: Կոտիոյ նորագտնութիւնները անուանակարգութեան ի նկատմամբ կարեւոր են: Երկուսն էլ Հերակլիոնը վեներիկի հնադարեան մէկ տարբերակն էր. քաղաք մը, ուր նոյնքան ջրանցքներ կային, որքան՝ ճամբաները:

Եթէ Կոտիո գարմանահրաշ հնաքներ գործող կախարդի կը նմանի, ան նաեւ ունի կախարդի մը յատուկ գաղտնի գործիքները՝ թրթրացումներ արձանագրող կորիզային մագնիսազգիփակագ գործիք մը եւ խորտնկէ-հանիսող քարեզայուն կազմած մը, որ կրնայ հաւանական հնութիւններու հետքը գտնել: Հնագիտները ջրամոյն իրերու համեմատական չափերով ջրամոյն իրերու համեմատական ուժին խոտելութիւնը՝ երկրին մագնիսական ուժին

բաղդատած: Մագնիսազգիփական գործիքը դէպի ջուրին մակերեսը բարձրանալու միջոցին նաւուն կը հաղորդէ տեղեկութիւններ, որոնք կը փոխանցուին արբանեակներու կապուած Երկրագունդի Դիրքը ձշող Դրուլթեան: Կոտիո Ֆրանսական Հիւլէական Ուժի Յանձնախումբին օգնութեամբ մագնիսազգիփական այս գործիքը պատշաճեցուցած է հնագիտութեան: Յանձնախումբը կը գլխավորէ սուզանաւերու հետքը փնտրող կազմակերպչական ջոկատները, որոնք ֆրանսական ծովուժին ծառայեցնելու աշխատանքը: Մագնիսազգիփական գործիքը քաղաքային նպատակներու համար օգտագործելու առանձնաշնորհումը վայելելով՝ Կոտիո առաւելութեամբ մը օժտուած է հնագիտական մրցակցութեան մէջ: «Ուր որ կը սուզուինք, բան մը կը գտնենք», կ'ըսէ Կոտիոյ ստորջրային հետազոտութեան խմբակէն ամերիկացի մը՝ Սիւզըն Հենրիքսը:

Կոտիո 1980ական տարիներուն կը հետազոտէր խորտակուած նաւեր, որոնց շարքին էր չինական նաւ մը եւ սպանական Սան Տիեկո ցուկանաւը, որոնք ընկղ-



Մղոնաքարի մը յայտնաբերումը հաստատեց ֆրանսացի հնայնագիտական Կոտիոյ այն կասկածը, թէ յայտնաբերած էր հնադարեան Եգիպտոսի Սիւզըն Հենրիքսը:

ներով եւ կրանիթէ սիւներով եղբրուած: Գրեթէ նոյն միջոցին ֆրանսացի հնագետ Ժան-Իվ Էմիլիոն Աղեքսանդրիոյ արեւելեան նաւա-

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՊԱՏԸ ՓՐԿԵԼՈՒ ԾԻԳ

«ԻՆՅԵՐՆԵՅՆԸԸ ԵՐՈՇԼ ԹՐԻՊՈՒՒՆ» ԿԸ ԳՐԷ ՊԵՅՃԻՆԿԵՆ ԳՈՒՐՍ ԱՃԻԱՐԿԻ ՍԵԿ ԵՐԱՅԱԼԻԵՐ ՊԱՇՏԱՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՆՈՒԹԵԱՆ ՍԸ ՄԱՍԻՆ

«Եթէ Մեծ պատը չես տեսած, իրաւ մարդ չես», ըսած է Մաօ Յէ Թունկը: Այժմ Չինաստանի երեքմիլիոն ղեկավարին իմաստային յայտարարութիւնները լուրջ վերաբերում կ'արժանանան միայն պատմաբաններու կողմէ: Սակայն Մաօ Յէ Թունկի վերոյիշեալ հաստատումին ծանօթ է իւրաքանչիւր քաղաքացի: Ամէն տարի միլիոնաւոր չինացիներ կ'երթան տեսնելու Մեծ պատը:

Իրօք, այնքան մեծ թիւով «իրաւ» մարդիկ եւ կիններ կ'այցեցնեն պատը, որ Պէյճինկէն դուրս ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող վայրերը շրջափակուած են պէյյապոյի գլխարկներ կողմ գրօսաշրջիկներով եւ յուշանուէր վաճառող փերեզակներով: Ամէնէն աւելի այցելուներ ընդունող Պատայինկ շրջանին մէջ գոյութիւն ունին չինական դրամանի հարիւրաւոր ճաշարաններ, ժողովրդային իրեր վաճառող կրպակներ, շարժապատկերի սրահ մը, կեղծ Քէ. Էմ. Սի. Ըաշարան մը եւ նոյնիսկ կեղծ պատ մը, որուն վրայ փորագրուած է Մաօ Յէ Թունկի հուշակաւոր խօսքը, անոր ձեռագրի վերադարձութեամբ:

Բազմաթիւ այցելուներ պատրանաթափ կ'ըլլան տեսնելով այս աւելորդ գարգացումները: Սակայն Ուիլիամ Էրնեստ Էնթոնով բրիտանացի մը, որ իր չափահաս կեանքին մեծ մասը նուիրած է Չինաստանի Մեծ պատին հետազոտութեան եւ ուսումնասիրութեան, նման այլանդակութիւններ սրբապղծումի համագոր կը նկատէ: «Ինձի համար Չինաստանի Մեծ պատը աշխարհի հրաշալիքն է: Մինկ թագաւորութեան օրով կառուցուած պատին մէկ մասը ինքնին հսկայ մըն է՝ 3 կիլոմետր մէջ տարածուող ջրաբարձի երկարութեամբ, - կ'ըսէ ան:- Անոր կաւէ աղիւսներէն իւրաքանչիւրը կը կռնէ մինչեւ 86 քմ.: Կը նշանակէ, թէ 8 հոգի մէկ քար կը փոխադրէին: Պատին կառուցումին մէջ ներդրուած աշխատանքը զայն գրեթէ կը սրբացնէ»:

Լինտոսէյի համաձայն, Չինաստանի պատը պարիսպ մըն է, չինուած՝ տարբեր նիւթերէ: քար, կարծրացած հող եւ կաւէ աղիւսներ: Անիկ կառուցուած է կայսերական հրամանով, կայսրութիւնը պաշտպանելու համար յարձակումներու դէմ: Չինացիք ունին անծալրածի պատեր հիւսելու երկար պատմութիւն մը, որ սկիզբ առած է Պատերազմի Նախնական ժամանակներէն: Շուրջ 20 պատեր հիւսուած են Չինաստանի պատմութեան ընթացքին: Սակայն չինացիք Մեծ պատը կը նկատեն պաշտպանական շարունակական ծրագրերի մը արդիւնքը:

Մինկ թագաւորութեան օրով (1368էն 1644) կառուցուած Մեծ պատը ամէնէն երկարն է բոլոր պատերուն մէջ: Անիկ կը տարածուի 6700 քմ-ի վրայ եւ ամէնէն կատարելագործուած միջոցներով կառուցուած է. բարձրացած է այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ Չինաստան աշխարհի ամէնէն յառաջդէմ արհեստագիտութեան երկիրն էր: Այս պատը միակն է, որուն քարերը չաղախով միացած են: Անիկ ծառայած է իբրեւ պաշտպանական գերազանց պատարար, սակայն անոր կառուցումին գլխաւոր նպատակն էր հեռու պահել վաշկատուն եւ թշնամական այն ցեղախումբերը,

զորս ներգրանելը դժուար էր եւ պարտութեան մատնելը՝ անկարելի: Պատին պաշտպանական կարողութիւնը կախեալ էր թագաւորական ընտանիքէն եւ անոր ապագովութիւնը ստանձնած ժողովրդ համոզութենէն: Մինկ թագաւորութիւնը ի վերջոյ քայքայուեցաւ նոյն ինքն վաշկատուն «բարբառս» թշնամիներուն կողմէ, որոնք դէմ պաշտպանութիւնը նպատակով հիւսած էր պատը: Այս յաղթական ցեղախումբերը, որոնք հիմնեցին Քինկ թագաւորութիւնը (1644էն 1911), վաշկատուն ըլլալով՝ կարող չզգացին շարունակելու պատեր կառուցելու աւանդութիւնը: Փոխարէն՝ անոնք իրենց ուժերը կեդրոնացուցին ծովագերայ յաշտպանական կառուցներ արձրացնելու վրայ՝ դէմ դնելու համար ծովու ճամբով արշաւող եւրոպացիներուն:

Այսուհանդերձ Քինկ թագաւորները իբրեւ օրէնք հաստատած են պատին պահպանումը եւ Պրիւսիան եւ որեւէ արիւս հանել անկէ: Սակայն ժամանակի եւ պատերազմի աւելները, ինչպէս նաեւ չինացիք փնտրող մարդոց յափտակութիւնները մեծ վնաս հասցուցած են պատին՝ քանդելով անոր ամէնէն դիւրամատչելի եւ խոցելի տեղերը:

Լինտոսէյ Չինաստանի Մեծ պատին նկատմամբ հետաքրքրութիւն սկսած է ցուցաբերել 1986ին, երբ պատին երկայնքին առանձին վազելու իր առաջին փորձերը կատարած է: Փորհարութիւնը, անջրացումը եւ ոսկրաբեկումը շլատած են անոր ուժերը: Սակայն 1987ին ան կարողութեամբ կտրած է Մեծ պատին 2500 քմ. երկայնքը, հակառակ անոր որ ձեռքակալուած է օտարներու համար արգելուած տարածքի մը մէջ եւ իր ուղեւորութեան կիսուն վտարուած է դէպի Հոնկ Բոնկ: Այս արկածայինորութեան ընթացքին, զոր ան նկարագրած է «Ըլոն ան տը կրէյթ Ուոլ» գիրքին մէջ, Լինտոսէյ մտորմացած է պատին եւ անոր աշխարհագրական միջավայրին հետ: Իր փորձառութիւնները ներշնչուած՝ ան զգացած է Մեծ պատը շրջապատող բնաշխարհը եւ Պէյճինկի մերձակայ տարածութիւնները պահպանելու կոչում մը:

«Սկիզբը, շուրջ 3 տարի առաջ, շատ պարզ փորձեր կատարեցի ուղադրութիւն հրաւիրելու համար այն իրողութեան վրայ, թէ Մեծ պատը կը քանդուէր,- կ'ըսէ ան:- Մինկ թագաւորութեան օրով կառուցուած պատը ինքնին աշխարհի ամէնէն վիթխարի սրբութիւնն է, սակայն բաց երկինքի տակ է եւ նոյնիսկ մէկ վերակացու ունին: Քանի մը մասեր պաշտպանուած են, սակայն մնացեալները՝ վայրի բնութեան մէջ վայրի պատեր են: Ասիկա հարց չէ, եթէ մարդիկ պատասխանատու զգան եւ համապատասխան ձեւով վերաբերին: Սակայն այդպէս չէ»:

Մեծ պատին սրբապղծումը Պէյճինկի մերձակայ շրջանին մէջ, որ կ'ընդգրկէ պատին ամէնէն գեղատեսիլ եւ լաւ պահպանուած մասերը, շատ արագ թափով կը վատթարանայ: Թէեւ օրէնքը կ'արգիլէ որեւէ բան կառուցել պատին վրայ կամ անոր երկու կողմերէն մինչեւ 200 մետր հեռավորութեան վրայ, սակայն կարող մը բաժիններ բեղբուած են բեկտարաբար կառուցումը եւ սահմաններով, յուշանուէրի կրպակներով եւ կառատուներով: Նուազ

հանգիստին մէջ պեղումներ կատարելու ընթացքին յայտնաբերած էր հին աշխարհի եօթը հրաշալիքներէն՝ Աղեքսանդրիոյ փարոսին հաւանական բեկորները:

Կոտիոյ աշխատանքը քննադատողները կ'ըսեն, թէ ան ինքզինք կը չարչարէ մէկ ծրագրէն միւսը ցատկելով, աւելի արկածախնդրութեան սէրէն մղուած, քան թէ՛ հնագիտութեան նկատմամբ կարգապահական մօտեցումէ: Սակայն կարելի չէ ժխտել, թէ ան յաջողած է հնադարեան Եգիպտոսի վրայ րանալ դարերէ ի վեր փակ պատուհան մը: Յարգ Կոտիոյ յայտնաբերած 8741 իրերը այնքան թանկարժեք են, որ Եգիպտոսի մէջ պատասխանատուներ արդէն կը մտածեն միջազգային շրջուն ցուցահանդէս մը կազմակերպելու եւ Աղեքսանդրիոյ մէջ ստորջրային հնագիտական մնայուն թանգարան մը կառուցելու մասին: Վերջերս, երբ Հերակլիոնի մէջ Կոտիոյ առաքելութիւնը կը հասնէր իր աւարտին, Փարիզի մէջ բնակող 54 տարեկան այս մարդը կարճ տաքատով եւ պէյյապոյի գլխարկով կանգնած էր իր հետախուզական նաւուն՝ «Փրիւսեա Տուտա»-ի տախտակամածին վրայ. ան կը հետեւէր կարմիր կրանիթէ սրբարան մը ջուրէն հանելու եւ զայն նաւուն վրայ գետեղելու աշխատանքին: «Յարգ չենք կրնար ճշգիւ անոր պատկանելիութիւնը,- կը բացատրէ ան:- Կը յուսանք յաւերջող պեղումներուն ընթացքին»: Բազմաթիւ հնագիտներ այս յայտնաբերումը կեանքի մը իրագործումը պիտի համարէին: Կոտիոյ համար անիկ պարզապէս այլ օրուան մը աշխատանքն էր:

բարգաւաճ շրջաններ եւս խաթարուած են անթիւ հաղորդակցութեան ցանցերով, ելեկտրական սիւներով, բաղնիքի սալիկներով պատուած գեղջկական խրճիթներով եւ նոր հարստացած չինացիներուն համար կառուցուած շքեղ բնակարաններով:

Լինտոսէյ առաջին հերթին փորձած է մաքրել սակ մարաքաղաքէն անմիջապէս դուրս գտնուող պատին շրջակայքը: Անոր ճիզը գրաւած է ուղադրութիւնը տեղական բազմաթիւ օրաթերթերու, որոնք շարքին՝ Համայնապարկաւորութեան բանբեր «ժողովուրդի Օրաթերթը»: Այս դրական հակազդեցութիւնը տեսնելով՝ Լինտոսէյ հաւատացած է, թէ պատը պահպանելու իր ճիզերը պիտի չբնագիտութիւնը օտարներու կողմէ Չինաստանի ներքին հարցերուն միջամուխ ըլլալու երեւոյթ: Անիկա նաեւ զայն մղած է պատին շրջակայքը հաւաքելու արշաւի մը՝ մարդոց ուղադրութիւնը հրաւիրելու համար պատին վերաբերող աւելի մեծ հարցերու վրայ:

Նիւթական աղբիւրներ եւ այլ ձեւի զօրակցութիւն պահանջելու համար Լինտոսէյ դիմած է Չինաստանի Մշակութային Գանձերու Գրասենեակին, որպէսզի անիկա պաշտօնական դիմում ներկայացնէ Պէյճինկի շրջակայքին տարածուող պատին մէկ մասը աշխարհի ամէնէն աւելի վտանգուած 100 վայրերուն ցանկին մէջ ներառնելու համար, որպէսզի այդ ձեւով կարելի ըլլայ օգտուել համաշխարհային կոթողներու յատկացումը հիմնադրամէն: Դիմում նագիրը ընդունուած է եւ Լինտոսէյ այժմ պիտի դիմէ հիմնադրամին՝ ստանալու համար 50 հազար սոլյարի յատկացում մը, զոր պիտի գործածէ մաքրելու համար պատին այն մասը, որ տակաւին անխաթար կը մնար մինչեւ 5 կամ 6 տարի առաջ, սակայն այժմ դարձած է զօրաշրջիկներու եւ ապօրինի շինարարութեան գոհը:

Լինտոսէյ Հոնկ Բոնկի մէջ նաեւ հիմնած է «Մեծ Պատին Միջազգային Բարեկամները» անունով կազմակերպութիւն մը, որ կը յուսայ, թէ մղիչ ուժը պիտի դառնայ պատին շրջակայքին պաշտպանութեան:

Կազմակերպութիւնը պիտի գործակցի Պէյճինկի Մշակութային Գանձերու Գրասենեակին պատասխանատուներուն հետ՝ հեղինակաւոր ուժով պաշտպանելու համար պատը պահպանելու գաղափարը, որ յաճախ կը հակադրուի զօրաշրջութեան:

«Ի՞նչ կը նշանակէ Մեծ պատին պաշտպանութիւնը,- հարց կու տայ Լինտոսէյ:- Չինաստանի պատասխանատուներուն մեծամասնութիւնը զայն կը հակնայ իրեւ պատը շաղախով ամրապնդելու, զայն կանգուն պահելու եւ արդի զօրաշրջութեան չափանիշներուն պատշաճ ենթակառուցներով օժտելու աշխատանք: Չրօսաշրջութիւնը կարեւոր մէկ մասն է տնտեսութեան եւ հետզհետէ աւելի կենսական պիտի դառնայ: Սակայն Մեծ պատը պատմութեան մէկ արձանագրութիւնն է, վաշկատուն եւ նստակեաց ցեղերու միջեւ բախում:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՊԱՏԸ ...

Շարունակում 7րդ էջին

ներուն արձանագրությունը: Անիկա մաս կը կազմէ Չինաստանի աշխարհագրութեան եւ նշուած է աշխարհի տարածքին հրատարակուած քարտէսներու վրայ: «Մեծ» բառը չափազանցուած անակաճ մը չէ, ընդհանրապէս փոքրացնող բառ մըն է»:

պաշտպանութեան կարիք ունին», կ'ըսէ ան: Նոյնքան պաշտպանութեան կը կարօտի պատը շրջապատող բնաշխարհը: «Կազմակերպութեան գլխաւոր նպատակը պիտի ըլլայ ապահովել, որ մինչեւ 20 տարի մարդիկ Պէյճինկէն հիւսիս երթալով՝ տակաւին պիտի տեսնեն պատը շրջապատող բնաշխարհ մը: Ներկայ պայմաններուն մէջ ասիկա հնարանական չէ: Շինարարութիւնը արագ թափով կը ծաւալի եւ տեսարանը պիտի գոցուի»:

Լինտսէյ կը գիտակցի, թէ Չինաստանի կերտուական եւ տեղական իշխանութիւնները դժուարութիւններ կը դիմագրաւեն Մեծ պատին պաշտպանութեան մէջ: «Չինաստանը 5000 տարեկան պատմութիւն ունի եւ շատ անկի երկար նախապատմական շրջան մը, կ'ըսէ ան: Ամէն տարի հնագիտական շուրջ 400 կարեւոր յայտնաբերումներ կը կատարուին, մեծ մասը՝ դիպուածով: Տակաւին չեմ նշեր մշակութային գանձերու մաքսանենգութիւնը: Իշխանութիւնները չափազանց զբաղած են»:

Իրօք, նոյնիսկ Լինտսէյ պարտաւոր է հաւատարմութիւն մը գտնել իր հետաքրքրութիւններուն միջեւ, երբ հարցը կը վերաբերի Չինաստանի Մեծ պատին ուսումնասիրութեան, հետազոտութեան ու պահպանման: Պէյճինկի մերձակայ շրջանին մէջ տարածող պատին վերաբերող ամբողջ գիրք մը գրելէ ետք արդեւ չէր արտարակել զայն, այն մտավախութեամբ, թէ անիկա կրնայ ծառայել չինարարական ծրագրերը մշակողներու նպատակներուն:

«Երկայրի հարց մըն է ասիկա, կ'ըսէ ան: Կ'ուզես օգտակար ըլլալ բեզի պէս մտածող անձերու, սակայն ընթերցողները քու հակակշիւնդ դուրս են»:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀՐԱՉ ԱՍԼՊԵՏԱՆԻ մահուան քառասունօրեայ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Յուլիս 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԻՔՏԱՅԱ ԿԵՐԻ ԳԸՎԸՐԵԱՆԻ մահուան 7. տարեկիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Յուլիս 2002, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատարան մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՇԱՆՈՅ ՊԱՆԵԱՆԻ մահուան Բ. տարեկիցից եւ ՊԵՏՐՈՍ ՊԱՆԵԱՆԻ մահուան Ը. տարեկիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Յուլիս 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹԱԼԻՆ ՄԻՔՅԷԼԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Յուլիս 2002, Աճախի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՆՈՒԿ ՊՈՐԱՆԵԱՆԻ մահուան քառասունօրեայ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Յուլիս 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) Մեծ սեր մը ձեռք դուրս պիտի բախէ այսօր: Ուրեմն խել կակնց մի՛ ձեւանք սիրային ցմահ առաջարկի մը դիմաց: Վերջը կը գոչաք:

☆ ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս) Փոքր երեկոյք մը ձեռք ընտանիքին անդամներուն հետ, ընթրիքի սեղանի մը շուրջ, պիտի ստեղծէ գուրք մը քննարկով: Փոքր հանդիպումները երբեմն մեծ ցնծութիւն կը պարգեւեն:

☆ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) Անձի մը հետ նոր բարեկամութիւն պիտի ստեղծուի ու անոր պիտի կապուի զօրաւոր զգացումներով, մինչդեռ դուք զայն լաւ չէիք ճանչցած: Փոխադարձ սիրով եւ նախազգուշութեամբ պիտի շարունակուի բարեկամութիւնը:

☆ ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) Բայտը ձեռք միակ դաշնակիցը պիտի ըլլայ այսօր: Ան ձեզի պիտի ընկերակցայ ամբողջ օրուան ընթացքին: Ուրեմն հոգեք մէկ կողմ դրէք:

☆ ԱՌԻԻՄ (24 Յուլիսին 23 Օգոստոս) Այսօր պիտի ըլլայ իրական առիւծ մը իր ամբողջական իմաստով: Պիտի ըլլայ ճիշդագոյն եւ փայլուն, նաեւ՝ հպարտ եւ հեղինակաւոր:

☆ ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Մրցիքի մը պիտի իրագործուի կարծեք՝ մոզական ձեռքով: Նոյնիսկ պիտի չհաւատաք, թէ բայտը այդքան կը ժպտի ձեզի: Բայց... հաւատացէք:

☆ ԿԵՒՈՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Այսօր երագուած օրն է աւարտելու երկար առեւտրի փութի մը: Ուրեմն հոգեք մէկ կողմ դրէք:

☆ ԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Եթէ գործ կը փնտռէք, արձակուրդի ամիսներուն շարունակեցէք փնտռուք կատարել: Պիտի կարեւոր ի վերջոյ ձեռք ապրանք աշխատանքը գտնել:

☆ ԱՂԵՂԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Օրը շատ յարմար է նամբարդութիւն մը որոշելու համար: Անոնք, որոնք պիտի ընկերակցան ձեզի, անոնց համար եւս օրը բայտաբեր է:

☆ ԱՅՄԵՂՁԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Պիտի կարեւոր քիչ է քիչ դրամ խնայել եւ ձեռք ուզած ծրագիրը կատարել: Ասիկա մեծ առաւելութիւն մը պիտի ըլլայ ձեր տնտեսական վիճակը բարելաւելու:

☆ ՄՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարին 19 Փետրուար) Անկանկալի բերք ձեռք ընկերուհին՝ զայն հրաւիրելով երեկոյքի մը, որուն ան կ'երագրէ երկար առեւտրի ի վեր: Օրը բայտաբեր է:

☆ ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) Միայն կարգապահութեան, օրէնքի կամ կազմակերպական աշխատանքները չեն, որ ձեզ կը յատկանշեն. ունիք նաեւ այլ յատկանիշներ, որոնցմով յաջողութիւն պիտի գտնէք այսօր:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՄ / ԶՔՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍՏ ԸՆՖԷ ԻՐ ՎՐԱՅ ԿԸ ՀՐԱԻՐԷ ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ



ԸՆՖԷՆ հարուստ է ժայռափոր նման բնակարաններով

Լիբանանեան ծովափերին վրայ ծուարած է թրիփոյիէն միայն 15 քիլոմէթր հարաւ գտնուող իւրայատուկ գիւղ մըն է Ընֆէն, որ իրեն յատուկ դիմագիծ տուող բազմաթիւ յատկանիշներու կողքին կրնայ հարուստնալ իբրեւ Միջերկրականի արեւելեան ափին գտնուող միակ գիւղը, որուն բազմաթիւ հին կառոյցները փորձած են իր ժայռոտ բլուրներուն մէջ: Ժայռափոր եւ մաշած բերդ մը, եօթը փոքրիկ հնամենի եկեղեցիներ եւ նեղ միջանցքներ Ընֆէն կը վերածեն իբրեւ նախնայն այն գիւղերէն մէկուն, որ տարբեր աշխարհներու տարօրինակ համադրութեամբ կը ներկայանայ այցելուին:

Վերջին տարիներուն, իբրանացիներուն մեծամասնութեան անձանօք յուշակոթողներու եւ աւերակներու շարք մը սկսած է աշխարհի տարբեր կողմերէն Ընֆէի վրայ հրաւիրել պատմագէտներու, հնագէտներու եւ հնութիւններու պաշտպան կազմակերպութիւններու ու շաղղրութիւնը: 1998ին, համաշխարհային ժառանգութեան կոմիտէի կողմէն Ընֆէն ընդգրկուած է ՅՄԿՅԻ ժառանգութեան օբյեկտներու ցանկին մէջ:

Խարհային Յուշակոթողներու Հիմնադրամը Ընֆէի աւերակները ներառեց աշխարհի ամենէն աւելի վտանգուած հարիւր հնագիտական վայրերու ցանկին մէջ, որուն մաս կը կազմեն նաեւ Չինաստանի Մեծ պարիսպին եւ Եգիպտոսի Փարաուններու Հովիտին նման վայրեր: Այդ հնագիտական յուշակոթողներուն շարքին եւս փրկուելու եւ հոն մնական պարիսպներ, գինիի հնձաններ, խաւի աւերակները, իսկ չափազանց բերդ մըն է Է. դարու երկու եկեղեցիներ:

Գիւղին ժայռոտ նաւահանգիստը, որ մաս կը կազմէ հնամենի քաղաքին լքուած բաժիններուն, հաւանաբար քարէ աստիճաններով եւ փոքրազարդ շաղղրութեամբ շարքերով, որոնցմէ կարելի է նկատել Ընֆէի աղի պտարանները, որոնց «բերքը» տեղացիներուն կողմէ կը կոչուի «ձերմակ ոսկի»:

Յունական կղզիներու պարզուկ գիւղերուն մթնոլորտ փոխանցող Ընֆէն ունի ծովափերէն արձակուրդի հաճելի տուններ:

ՀՆՈՒՍԵՏԻԼ

TV schedule listing various channels (Eurosport, Euronews, etc.) and their programming times for different days of the week.

ՍԱԿԱՐԱՆ

Պէլոուսի սակարանին մէջ օտար դրամանիշներու փակման սակագինները հետեւեալներն են:

Table with 2 columns: Currency type and exchange rate. Includes items like US Dollar, Euro, etc.

Table with 2 columns: Currency type and exchange rate. Includes items like Gold, Silver, etc.

ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում

Table with 2 columns: Item name and price. Includes items like Gold, Silver, etc.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5193 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ


10x10 grid for a word search puzzle.

Two columns of text for a crossword puzzle, including clues and answers.

Additional puzzle information and contact details for the publisher.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ




ՀԵԾԵԼԱՐՇԱԲ. ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱԶՔ

ՏՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ ՅԱՏԿԱՆՇՈՒԵՑԱԻ ԱՐԿԱԾՆԵՐՈՎ - ԿԱԼՏԵԱՆՈ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Ֆրանսայի հեծելաբանի շրջավազին 5րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցավ Երեւանում (195 քմ.), վերջ գտավ հարմարացի հեծելաբանուհի Երազնիկի յաջողեցումով, որ ծամանման գիծ հասավ արձանագրելով 4 ժամ 13 վայրկեան եւ 33 երկվայրկեան արդիւնք մը:

Քիրսիփու, որ 1999ին եւ անցեալ տարուան նոյն այս շրջավազին, իւրաքանչիւրին շահած էր երկու հանգրուան, սիրինթով յաջողեցավ գերազանցել իր հետ եկող բազմաթիւ հեծելաբանուհիները, որոնք վերջին 86 քիլոմետրին բաւական նեղ կացութեան մատնեցին Կիւր:



Այժմ Էյ. Ճի. 2 Փրեվոյանս խումբին մաս կազմող Քիրսիփու, որ իր ասպարէզին ընթացքին իր 96րդ յաջողանակին կը տիրանար, այսպիսով կը

շրջավազը: Անոր հետ միասին արկած ունեցաւ նաեւ իտալացի Մարքո Փիւնոթթի, որ սակայն ստացաւ ամենէն աւելի գէշ արկածը: Ան թեւեւ հիւանդանոց փոխադրուեցաւ, սակայն անոր ուղեղը ոչ մէկ ձեւով վնասուեցաւ, թեւեւ պէտք է նշել, որ անոր քիթը կտրուեցաւ:



Մարքո Փիւնոթթի՝ արեւելուայ վիճակի մէջ

մասնակցի շրջավազին: Այսօր՝ Ուրբաթ տեղի կ'ունենայ 6րդ հանգրուանը՝ Ֆորժ-Լէ-Վ'Օլէն Ալանսոն (199,5 քմ.):

Ստորեւ՝ 5րդ հանգրուանին արդիւնքները:
1.- Եւան Քիրսիփու (Էսթոնիա) Փրեվոյանս 4 ժամ 13' 33"
2.- Միքայէլ Սէնտսթրոտ (Գանիա) Թիսթալի (նոյնը)
3.- Լուսո Տիերքէքնս (Պելճիքա) Լամփրէ-Տայքին (նոյնը)



Մարքո Փիւնոթթի՝ արեւելուայ վիճակի մէջ

Վիրաւորուողներուն շարքին էր նաեւ Թոմ Սթիլզ
Ֆրանսացի Ռիշար Վիրէնք, որուն ապագան ցարդ անորոշ է, սակայն կ'ակնկալուի, որ ան շարունակել

Ֆրանսացի Ռիշար Վիրէնք, որուն ապագան ցարդ անորոշ է, սակայն կ'ակնկալուի, որ ան շարունակել

Ֆրանսացի Ռիշար Վիրէնք, որուն ապագան ցարդ անորոշ է, սակայն կ'ակնկալուի, որ ան շարունակել

ՊՕՂՈՍԵԱՆ ՄԻԱՅԱԻ ԷՍՓԱՆՈՒԼԻ

Յրանսացի միջազգային միջնապահ Ալէն Պոդոսեան երէկ միացաւ Էսփանիոլի, նկատի ունենալով, որ անոր պայմանագրութիւնը աւարտած էր Փարմայի հետ: Ան 2 տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց իր նոր ակումբին հետ:

31 տարեկան Պոդոսեան ֆուտպոլիստի իր ասպարէզը սկսաւ Մարսէլի հետ, նախքան Նափոլի իր մեկնումը (1994ին): Ան շատ կարճ ժամանակաշրջան մը մաս կազմեց Սամոտրիայի, նախքան Փարմա իր փոխանցումը: Ան արդէն իսկ 1998ի Մոնտիալիին հանդիսացած էր աշխարհի ախոյեան, Յրանսայի ֆուտպոլի ազգային խումբին հետ:

26 անգամ Յրանսայի ֆուտպոլի ազգային խումբին շապիկը կրած Պոդոսեան Եւրո-2000ի ֆուտպոլի մրցաշարքէն բացակայեցաւ՝ վիրաւոր ըլլալով:

Ճափոնի եւ Հարաւային Բորնէյի մէջ տեղի ունեցած 2002ի Մոնտիալիին, թէեւ ան նկատի առնուած էր մարտիչ Ռոմէ Լըմէրի կողմէ (այժմ՝ պաշտօնական էղած), սակայն ան իր մարտիչին կողմէ որեւէ մրցումի (ընդամենը՝ երեք մրցում) նկատի չառնուեցաւ:

ՃԱՏՐԱԿ

ՉՈՐՍ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻԻՐԻՆ ՄԵԶ

Ճատրակի միջազգային ֆետերասիոնը (ՖԻՏԷ) երէկ հրապարակեց Յուլիս ամսուան ճատրակի ընդհանուր դասաւորումը, որուն պարագլուխի դերքը կը գրաւէ Կէրի Գասպարով՝ 2838 կէտով:

Առաջին տասին մէջ ներկայ են. Վլասիմիր Բրամնիք (2807 կէտ), Վիշվանաթան Անանտ (2755), Մայքլ Ատամով (2752), Վեսելին Թոփալով (2745), Ռուսլան Պոնոմարիով (2743), Եւգենի Փարեյն (2726), Պետեր Լեկո (2717), Ալեքսանտր Մորոզեւիչ (2716) եւ վասիլի Իվանչուք (2711):

ՄԱՐՔ ՀԻՈՒՃ ԼԻԵՑ ՖՈՒԹՊՈՒՍԻ ԻՐ ԱՍՊԱՐԷԶԸ

Բրիտանական մամուլին համաձայն, Կալէսի ֆուտպոլի ազգային խումբին մարտիչ Մարք Հիուձ մտադրած է լքել ֆուտպոլիստի իր ասպարէզը եւ կեդրոնական միայն ազգային խումբին վրայ՝ փորձելով իր կապը հասցնել Փորթուգալի մէջ տեղի ունենալիք Եւրո-2004ի ֆուտպոլի մրցաշարքին:

Նշենք, թէ 2001-2002 եղանակի աւարտին 38 տարեկան յառաջապահ Հիուձի ակումբը՝ Պլէքպըրն, չնորոգեց անոր պայմանագրութիւնը: Հիուձ, որ վերջին երեք տարիներուն Կալէսի մարտիչի պաշտօնը կը կատարէր կիսամաս դրութեամբ, երէկ ըսաւ. «Ֆուտպոլիստի ասպարէզս լքելը եղաւ բաւական դժուար, թէեւ այդ հարցը լրջօրէն քննարկեցի ընտանիքիս հետ: Ֆուտպոլիստի ասպարէզս լքելով՝ այդքան ալ տխուր չեմ, որովհետեւ ունեցայ շատ երջանիկ եւ յիշատակելի պահեր, բազմաթիւ ֆուտպոլիստներու հետ»:

Ալէի քան 70 անգամ Կալէսի ֆուտպոլի ազգային խումբին շապիկը կրած Հիուձ, ամենէն աւելի շատ մնացած է Մանչեսթըր Եունայթըտի հետ, որուն հետ ախոյեանութեան մրցումներուն ընթացքին դաշտ ներկայացած է 345 անգամ՝ նշանակելով 119 կոլ: Ան նաեւ մաս կազմած է Պարսելոնայի, Պայերն Միւնխի, Սաութհեմթըրնի, Էվերթընի, Պլէքպըրնի եւ վերջապէս Չելսիի:

Անոր վերջին յաջողութիւնը եղաւ Պլէքպըրնի հետ, երբ անցեալ Փետրուարին, Քարտիֆի մէջ Թոթենհեմի դէմ տեղի ունեցած Անգլիոյ Լիգայի բաժակի մրցաշարքին, անոր կապը 2-1 արդիւնքով յաջողանալ մը արձանագրեց:

ԶԻՔՕ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ ԶԱՓՈՆԻ ՄԱՐԶԻՉ

Պրապիլիցի միջազգային նախկին մարտիչի Զիքո, երէկ նշանակուեցաւ Ճափոնի ֆուտպոլի ազգային խումբին մարտիչ՝ յաջորդելով ֆրանսացի Յիլիփ Թրոուսիէի, որ 2002ի Մոնտիալիին իր կապը Բ. հանգրուանի հասցուցած էր:



Զիքո

Զիքո, որ այսպիսով կը ստանձնէ իր հրաժարականը ներկայացուցած Թրոուսիէի պաշտօնը, 1991էն ի վեր Ճափոնի ախոյեան Բաշիմա Անթիլիսի հետ թէ մարտիչ էր եւ թէ մարտիչ:

Զիքո, իր նոր պաշտօնը պիտի ստանձնէ յառաջիկայ Յուլիս 20ին, նախքան Չինաստանի դէմ տեղի ունենալիք ֆուտպոլի միջազգային մրցումը (յառաջիկայ ամիս՝ Օգոստոս 22ին, Պեյճիկի մէջ): Ապագային անոր արձանագրումը՝ Զիքո կ'ըսէ, թէ միակ դժուարութիւնը, որ կրնայ ունենալ ակումբներու եւ ազգային խումբին միջեւ տեղի ունեցած փոխ յարաբերութեան հարցն է, որովհետեւ շատ յաճախ ազգային խումբի մարտիչներ տրամադրող ակումբը կ'ըլլայ միակ տուժողը: Ան իր կատարելիք աշխատանքներուն անորարարունակ լինելու կ'ըսէ, թէ իր միակ նպատակը պիտի ըլլայ 2006ի Մոնտիալիին (որ տեղի պիտի ունենայ Գերմանիոյ մէջ) տոմս մը ապահովել:

դառնայ այժմու հեծելաբանուհիներէն չորրորդ լուսագոյնը: 1999ին եւ 2001ին վեցական օր դեղին շապիկը հագած Քիրսիփու, այսպիսով յաջողեցաւ գերազանցել ֆրանսացի Քրիսթոֆ Էտայէյնը, պելճիքացի Լուսո Տիերքէքնսը, իտալացի Շթեֆանս Բապակրանտան եւ դանիացի Միքայէլ Սէնտսթրոտը: Սպանացի Իկոր Կոնչալէս Կալտէանս, որ գրաւեց 28րդ դիրքը, 33" ուշացումով, մնաց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքին վրայ, իսկ կառակ անոր, որ ան այժմ Սէնտսթրոտի եւ Տիերքէքնսի նման արձանագրած է նոյն արդիւնքը: Շրջավազը լքող առաջին հեծելաբանուհի

Անոր խումբին Մափէյի տնօրէնը Սերճ Փարսանի ըսաւ, թէ. «Բաղդատմամբ նախորդ տարիներուն, սկզբնական հանգրուաններուն, բազմաթիւ արկածներ կը պատահէին: Այս տարի սակայն կացութիւնը բաւական լաւ վիճակի մէջ է եւ չկան այդքան լուրջ վիրաւորներ»: Յարդ իր հեծանիւներով արկած ունեցան Քրիսթոֆ Մորո, Տիտիէ Ռուս եւ Սթիւարթ Օկրէյտի, որոնք սակայն շրջավազը չլքեցին: Երեկուան հանգրուանին, ծամանման գիծէն 30 քիլոմետր առաջ, պելճիքացի Ռիք Վերպրիւկը Կորուար արկած մը ունենալով 20 այլ հեծելաբանուհիներու հետ, ստիպուած եղաւ լքել

ԻՐԱՔ ՓՃԱՅՈՒՅՎՈՒ Է ՀԱՒԱՔԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԻՐ ԲՈԼՈՐ ԶԵՆՔԵՐԸ

Կ'ԸՍԵ ԹԱՐԵՔ ԱՉԻՉ

Իրաքի փոխ վարչապետ Թարեք Ալիյ յայտարարած է, թե իր երկիրը գործադրության դրած է ՄԱԿի որոշումները, որոնք կը պահանջեն փճացնել հաւաքական քանդուկի բոլոր կէտքերը, հաղորդեց Սուրիոյ ՄԱՆԱ լրատու գործակալութիւնը: ՄԱՆԱ ակեցոյց, որ Ալիյ իր յայտարարութիւնը կատարած է Չորեքշաբթի երեկոյեան, Սուրիոյ նախագահ Պաշար Ասաւի հետ հանդիպումէ մը ետք:

Իրաք - ՄԱԿ վերջին քանակութիւնները, որոնք տեղի ունեցած էին անցեալ շաբաթ Կիեն-նայի մէջ, ձախողութեամբ աւարտած էին: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը կը պահանջէ, որ Իրաք արտօնութիւն տայ կէտքի քննիչներուն վերադարձին: Իրաք կը մերժէ՝ դիտել տալով, որ քննութեան ենթարկուելիք ոչինչ ունի:

Մտաքին գործոց նախարար Նաժի Սապրի Չորեքշաբթի օր ըսած էր, որ Իրաք պատրաստ է շարունակելու քանակութիւնները ՄԱԿի հետ, մինչև որ կարելի ըլլայ լուծում մը գտնել քննիչներու վերադարձին հարցին: Սապրի ակեցոյց սակայն, որ ՄԱԿ և Պաղտատ տակաւին համաձայնութիւն չեն գոյացուցած քանակութիւններու յարցի փուլին վայրին ու թուականին մասին: Այլ աղբիւրներու համաձայն, հաւանաբար յառաջիկայ քանի մը ամիսներու ընթացքին տեղի ունենայ նոր հանդիպում մը Սապրիի եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ: Ապահովութեան խորհուրդի այս նստաշրջանի նախագահը երկու օր առաջ ըսած էր, թե խորհուրդին գրեթէ բոլոր անդամները կ'ուզեն, որ ՄԱԿ - Իրաք քանակութիւնները շարունակուին:

ԸՆԴՀԱՆՍՈՒՐ ԶԱԿԱՏ ՈՒԱՃԻՆԿՈՒՄԻ ԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՇԱՏԷ

Նախագահ Սատում Հիւսէյնի իշխանութեան գլխաւոր ընդդիմադիր նկատուող Ամէտ Շալապի կոչ ուղղեց Ուաշինկթընի աշխատելու՝ ժողովրդավարութիւն հաստատելու համար Իրաքի մէջ, ոչ թէ՛ պետական հարուածի մը ծրագիրը, որուն գործողութեամբ Սատում պիտի փոխարինուի այլ բնութեամբ մը: Շալապի շեշտեց, որ ինք համոզուած է, թէ ժողովրդավարութիւնը կրնայ յաջողի Իրաքի մէջ, հակառակ տիրող բոլոր ոչ քաջալերական երեւոյթներուն: Ան ակեցոյց, որ Իրաքի ժողովուրդը չ'ուզէր գործողութիւններ, որոնք ամերիկեան գաղտնի սպասարկութեանց ձեռքով տեղի կ'ունենան հարաւային ամերիկեան երկրներու մէջ, ուր բռնատէրեր կը յաջորդեն իրարու Ուաշինկթընի հովանաւորութիւնը վայելող պետական հարուածներով:

Միւս կողմէ, քրտական շարժում մը յայտարարեց սահմանադրութիւն մը, զոր կարելի է գործադրութեան դնել, երբ Սատում Հիւսէյն տապալի Միացեալ Նահանգներու կողմէ: Արտաքին գործոց նախարարութեան բանբերը յայտնեց, որ Ուաշինկթըն տակաւին որեւէ ծրագիր չէ պատրաստած Սատումը տապալելու: Բանբերը յայտնեց, որ յառաջիկայ քանի մը ամիսներուն պատրաստ պիտի ըլլայ ծրագիր մը:

Քիւրտիստանի ժողովրդավար կուսակցութեան կողմէ պատրաստուած սահմանադրութիւնը կը ներկայացնէ յիշեալ շարժումին պատկերացումը յետսատումեան հանգրուանի Իրաքի մասին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԷՏՔ ԶԷ ԱՌԻԹ ՏԱԼ, ՈՐ ԾԱՅՐԱՅԵՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ...

Շարունակուած Ա. ԷջԸ

դի ունեցած են կրասնարմէյսի քաղաքապետին ու ոստիկանապետին հետ: Սէյրան Պաղտատարեան նաեւ ելոյթ մը ունեցած է ռուսական հեռատեսիլին, ուր լուսարձակի տակ առած է կրկնուող այս դէպքերուն իսկական պատճառները եւ շեշտած է, թէ առիթ պէտք չէ տալ, որ որոշ ծայրայեղ շրջանակներ հարուածեն հայ-ռուսական ռազմավարական կապերը:

Ռուսական լրատուամիջոցներու անդրադարձին մասին հարցումի մը պատասխանելով՝ Սէյրան Պաղտատարեան ըսաւ, որ ռուսական լրատուամիջոցները կը փորձեն պարզել նման դէպքերու իսկական պատկերը՝ շեշտելով, որ ոչ ռուս տարրերու դէմ յարձակումները չեն նպաստէր Ռուսիոյ ժողովրդավարականացման: Ռուսական լրատուամիջոցները նաեւ խիստ քննադատութեան թիրախ կը դարձնեն իրաւապահ մարմինները, որոնք իր տես յայտնի վայրագութիւններու ընդհանրապէս անտարբեր կը մնան:

Սէյրան Պաղտատարեան նաեւ տեղեկացուց, որ Ս. Յ. Դ. Մոսկուայի գրասենեակը բազմակողմանի հանդիպումներ կ'ունենայ ռուսական քաղաքական շրջանակներու հետ՝ ճիշդ ձեւով մեկնաբանելու համար երեւոյթները: «Այս առումով, քաղաքական հաստն շրջանակներով՝ չեն բաժնէր անգրագէտ վանգուածին մօտ տեղեկուած այլամերձ մտածողութիւնը», ըսաւ Պաղտատարեան:

ՈՒԱՃԻՆԿՈՒՄԻ ԿԸ ՔՆԱԴԱՏԷ ՔՈՏԱ ԸԱՍԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԿԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու կողմէ քննադատութեան ենթարկուելին քանի մը ժամ ետք, Իսրայէլ պաշտպանեց պաղեստինեան համալսարանի մը գրասենեակները փակելու որոշումը:

Ուաշինկթընի կողմէ հապուադէպ կ'ըլլան Իսրայէլի քննադատութիւնները: Չորեքշաբթի օր սակայն, Սպիտակ Տունը յայտնեց, որ մտաւոր է չափաւորական ղեկավար Սարի Նուսայպի գրասենեակին փակումով: Նուսայպի նախագահն է Քոտս համալսարանին, որուն գրասենեակները փակուեցան երկու օր առաջ: Սպիտակ Տան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ Նուսայպի գրասենեակին փակումը Արեւելեան Երուսաղէմի մէջ, մտաւորիչ երեւոյթ կը նկատուի: Յայտարարութիւնը կ'ակեցնէր, որ Ուաշինկթըն այս հարցին գծով խորհրդակցութիւններ կը կատարէ Իսրայէլի կառավարութեան հետ:

Իսրայէլ - Միացեալ Նահանգներ տարաբարութիւնը չի նշանակել, թէ երկու դաշնակիցներուն միջեւ կապերը պիտի վատթարանան, սակայն անիկա նկատել կու տայ, թէ Ուաշինկթըն դժգոհ է Իսրայէլեան որոշումէն, այնպիսի պահու մը, երբ Սպիտակ Տունը կոչ կ'ուղղէ պաղեստինցիներուն իշխանութեան հետագնելու համար Եսաւէր Արաֆաթը եւ վայն փոխարինելու ակտի չափաւորական ղեկավարներով:

Իսրայէլի հանրային ապահովութեան նախարար Ուլի Լանտո սակայն անդրադուրէի կը մնայ՝ շեշտելով, որ Նուսայպի գրասենեակը փակ պիտի մնայ, որովհետեւ յիշեալ վայրը կ'օգտագործուի պաղեստինեան իշխանութեան կողմէ: Իսրայէլ կ'արգիլէ պաղեստինեան իշխանութեան որեւէ ձեռք գործունէութիւն ունենալ Արեւելեան Երուսաղէմի մէջ: Նուսայպի կը հերքէ Լանտոյի ամբաստանութիւնը: Լանտո կ'ըսէ, որ պաղեստինեան իշխանութիւնը ամուր կապեր ունի Քոտս համալսարանին հետ, որուն

միջոցով կ'աշխատի ականահարել Իսրայէլի գերիշխանութիւնը Երուսաղէմի մէջ: Իսրայէլ եւ պաղեստինցիները տակաւին չեն յաջողած համաձայնութիւն մը գոյացնել Երուսաղէմի ապագային մասին: Երկուքն ալ իրենցը կը նկատեն քաղաքը:

Միւս կողմէ, պաղեստինցի պիւնեալներ Չորեքշաբթի գիշեր Իսրայէլացի սպայ մը սպաննեցին Կապալի մէջ, իսկ Իսրայէլացիներն ալ պաղեստինցի մը սպաննեցին Նապլուսի մէջ: Իսրայէլեան ուժերը նաեւ տասը հոգի ձերբակալեցին Նապլուսի գիւղերէն մէկուն մէջ: Ըստ բանակին, անոնք կասկածելի նկատուած ծայրայեղականներ են:

Իսրայէլ որոշած է նաեւ հրապարակային դատավարութեան ենթարկել պաղեստինցի ղեկավար Մարուան Պարրուօին, զոր ձերբակալած էր Ապրիլին: Իսրայէլ Պարրուօին կ'ամբաստանէ անձնասպանական գործողութիւններ եւ այլ յարձակումներ ծրագրելու յանցանքով: Պարրուօ կը հերքէ ամբաստանութիւնները՝ դիտել տալով, որ ինք քաղաքական ղեկավար մըն է, որ պայքար կը մղէ Իսրայէլեան գրամուսնի դէմ: Պարրուօ ընդհանուր քարտուղարն է Այսրորդանանի մէջ Ֆաթի շարժումին: Իսրայէլ չըսաւ սակայն, թէ ե՞րբ տեղի պիտի ունենայ Պարրուօի դատավարութիւնը:

●ԵՄՆԸՍԹԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ ԴԱՄԱՍԿԻՆԵՐԸ ԻՍՐԱՅԷԼՅԳԻ քաղաքային դատավարութեան ենթարկելու որոշումը դէմ պաղեստինեան յարձակումները ու անձնասպանական գործողութիւնները, որոնք մարդկութեան դէմ ոճիր կը նկատուին: Ըմբարթի, որուն տեղեկագիրները յաճախ կը դատաւարտեն իսրայէլեան բանակին որդեգրած միջոցառումները, կոչ ուղղեց պաղեստինեան իշխանութեան ձերբակալելու եւ դատելու պատասխանատուները այս յարձակումներուն, որոնք կը խախտեն մարդկութեան տարրական սկզբունքները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ...

միլիոն տոլարի հասնող տարեկան գումար կ'աւելցնէր զուրկ համար մշակուած ծրագիրին գործադրութեան մէջ արձանագրուած յարաբերութիւնը կը ստուգէ:

Տերվիչի հրաժարումին մասին առաջին անգամ շեշտեց զուրկ համար մշակուած ծրագիրին գործադրութեան մէջ արձանագրուած յարաբերութիւնը կը ստուգէ:

Սերվիչի հրաժարումին մասին առաջին անգամ շեշտեց զուրկ համար մշակուած ծրագիրին գործադրութեան մէջ արձանագրուած յարաբերութիւնը կը ստուգէ:

Սերվիչի հրաժարումին մասին առաջին անգամ շեշտեց զուրկ համար մշակուած ծրագիրին գործադրութեան մէջ արձանագրուած յարաբերութիւնը կը ստուգէ:

Սերվիչի հրաժարումին մասին առաջին անգամ շեշտեց զուրկ համար մշակուած ծրագիրին գործադրութեան մէջ արձանագրուած յարաբերութիւնը կը ստուգէ:

Շարունակուած Ա. ԷջԸ
կան տագնապը կրնայ ընթացիկ գուրկ բերել Մ. Դ. Ֆոնտին գորակցութիւնը վայելող 16 միլիոն տոլար համաձայնութիւնը, որուն նպատակն էր Թուրքիան գուրկ բերել ելեմտական տագնապէն, որ լիբան կէտով արժեզրկած էր եւ երկիրը 1945էն ի վեր ամէնէն ծանրակշիռ տնտեսական տագնապին մէջ միջոցառումներ:

Թուրքիան նաեւ Ուաշինկթընի շրջանային բանալի դաշնակից մըն է՝ ահաբեկչութեան դէմ անոր հուշակած պատերազմին մէջ:

Ճէմ կառավարութեան եւ կուսակցութեան մէջ ամէնէն ակտիւ յարգանք վայելող անդամներէն մէկն էր եւ կառավարութեան հազուագիւտ անդամներէն մէկը, որ միջազգային բեմի վրայ հանրաճանաչ է:

Ինքնիթ ցարդ կը մերժէ տեղի տալ իրեն ուղղուած հրաժարելու կոչներուն եւ մինչեւ կիրակի օր տակաւին կ'ըսէր, թէ իր կառավարութիւնը պիտի մնայ մինչեւ իսրայէլի սպայ մը սպաննուի Նուսայպիին աւարտը՝ 2004ին: Թէեւ հրապարակաւ ոչինչ ըսած է, սակայն հարցազրույցի մը մէջ զրեթէ ընդունած է այս տարի կանխահաս ընտրութիւններ կայացրնելու գաղափարը:

Ան կը թուի ամէն զեղով վարչապետի իր պաշտօնը պահպանել մինչեւ ընտրութիւններ Դէպքեր սակայն կրնան այլ բան թելադրել անոր: 128 երեսփոխաններէն աւելի քան 35ը հրաժար-

ԻՐԱՆ

ԱԶՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՄԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ԽԱՄԵՆԻՆ

Թեւրուս, 11 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի Ազգային Ապահովութեան Գերագոյն խորհուրդը փորձեց Հինգշաբթի օր վերջ տալ վեճի մը, որ ծայր տուած էր ապստական բարձրաստիճան կրօնաւորի մը հրաժարականին յոյսի տակ: Գերագոյն խորհուրդին լուծումը մամուլը լռեցնելու էր: Արդարեւ, խորհուրդին կողմէ յայտարարուած որոշում մը արգիլեց օրաթերթերուն հրապարակել որեւէ լուր կամ հակադարձութիւն, որ կ'առնչուի այսօրու ժալալետին Թահերիի հրաժարականին:

Թահերի հրաժարեցաւ Չորեքշաբթի օր Իսֆահանի Ուրբաթ օրուան հաւաքական գլխաւոր աղօթքը առաջնորդող իր պաշտօնէն: Թահերի մեծ քաղաքի մը աղօթքը առաջնորդող միակ կրօնաւորն էր, որ հրապարակաւ զօրակցութիւն կը յայտնէր նախագահ Մոհամէտ խաթեմիի բարեկարգումներուն: Թահերի հրաժարեցաւ, իրեն բողոք կարգ մը անարարելոյթներու դէմ, որոնք տեղի կ'ունենան եւ կը վայելեն օրհնութիւնը իշխանութեան վրայ գտնուող կրօնաւորներուն: Ան դատաւարտեց յատկապէս՝ Իրանի գերագոյն ղեկավար այսօրու Ալի Խամենէին:

Ապահովութեան Գերագոյն խորհուրդին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ երկիրին մէջ կայունութիւնն ու անդորրը պահելու համար, օրաթերթերուն կ'արգիլուի հրապարակել Թահերիի կեցուածքին դէմ կամ թեր տեսակետներ: Ապահովութեան խորհուրդին մաս կը կապուեն նախագահը, բարձրաստիճան նախարարներ, արարադատութեան պետն ու բանակին հրամանատարը, ինչպէս նաեւ՝ գերագոյն ղեկավարին ներկայացուցիչները:

Թահերի խիստ ոճով քննադատած էր Խամենէին՝ հարցալարի տակ անուշով անոր հանգամանքը, որուն միջոցով ան տէրն ու տիրական է երկիրին, որովհետեւ բանակը, դատական իշխանութիւնները եւ խորհրդարանին բանաձեւերն ու օրհնագիծերը վերջին ենթարկող բոլոր խորհուրդները իրեն ենթակա են:

Իրանի գերագոյն ղեկավարը անարգող որեւէ խօսքի մը հետինակը քանտարկութեան կը դատաւարտուի:

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԶԱՆԴԱՄԱԿԻ...

Շարունակուած Ա. ԷջԸ
Ս. Սարգսեան նշեց, որ Հայաստան իր միջազգային յարաբերութիւնները երբեք չէ կառուցած ՕԹՍՆ - Ռուսիա տարաբարութիւններուն հիմուն վրայ: «Այս առումով, ՕԹՍՆ - Ռուսիա մերձեցումը կը համապատասխանէ Հայաստանի շահերուն», ընդգծեց ան:

Նախարար Սարգսեան յայտնեց, որ 2000էն սկսեալ Հայաստան թափ տուած է ՕԹՍՆի ծրագիրներուն իր մասնակցութեան: «Եթէ 1999ին Հայաստան կը մասնակցէր ՕԹՍՆի միայն տար նախաձեռնութեան, ապա 2001ին այս թիւը անցաւ երեսուց: Կ'ուզեմ շեշտել, որ պիտուորական մարզէն ներս Հայաստան կը վարէ նպատակայարմար եւ հաւասարակշռուած քաղաքականութիւն», դիտել տուաւ Սարգսեան: Ան նաեւ ըսաւ, որ Հայաստան եւ Ռուսիա պիտի մնան ռազմավարական գործընկերներ, եւ այս ուղիով իրենք փոփոխութիւններ չեն նախատեսուիր առայժմ:

ԵՐԿԻՍՏՈՒԹԻՒՆԸ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

ներքին քաղաքական կայունութեան հաստատումը: Պատասխանելով լրագրողի մը այն հարցումին, թէ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմի հրաժարականը ի՞նչ անդրադարձ պիտի ունենայ Օսկանեան - Ճէմ հանդիպումներուն վրայ, Աղաջանեան ըսած է, թէ «Թուրքիոյ մէջ վերջին քաղաքական գարգացումները սրբնթաց բնոյթ ունեն եւ առայժմ անկանխատեսելի են: Պէտք է անգամ մը եւս նշեմ, որ Հայաստան միշտ կողմնակից եղած է բարձր մակարդակով երկխօսութեան, եւ շարունակ հանդէս եկած է անոր օգտին նպատակ ունենալով դրական գարգացումներու հասնել հայ-թրքական յարաբերութիւններուն մէջ»:

Արտաքին գործոց նախարարութեան բանբերը նաեւ յոյս յայտնած է, որ անկախ Թուրքիոյ մէջ քաղաքական գարգացումներէն, երկխօսութիւնը կը շարունակուի, «քանի որ անիկա կը բխի երկու դրացի ժողովուրդներու եւ պետութիւններու շահերէն»:

IT'S Panasonic SUMMER TIME AGAIN!
Win With Us
L.L. 70,000,000
260 PRIZES including:
34" TVs
DVD Mini Components
29" TVs
15" TVs
and
Radio Cassette Recorders
WIN
This offer is valid from July 8 till September 8, 2002. Under the supervision of The Lebanese National Lottery.